ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱ-ՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Էդգար Չախոյան

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.)

Հիմնաբառեր. Հարավային Կովկաս, զինված ուժերի վերադասավորում, ռազմաբազա, ՆԱՏՕ, ռազմական տեխնիկայի վերաբաշխում, Վրաստան-ԱՄՆ ռազմաքաղաքական հարաբերություններ, տարածաշրջանային անվտանգություն, Վրաստանի պաշտպանության նախարարություն, Աբխազիա, Հարավային Օսիա:

Հոդվածում մանրամասն ներկայացվում են Հարավային Կովկասում զինված ուժերի վերադասավորման հիմնախնդիրները 1991-2019 թթ. Վրաստան-ԱՄՆ հարաբերությունների համատեքստում: Մանրակրկիտ քննարկվում են Վրաստանի ռազմաքաղաքական համագործակցության արևմտյան ուղղության խորացման՝ ԱՄՆ-ի հետ ռազմավարական դաշնակից լինելու պատճառները, ակնկալիքներն ու արդյունքները: Վերլուծվում են ԱՄՆ-ի կողմից Վրաստանում ռուսական ռազմաբազաների դուրսբերման և դրանց փոխարեն ամերիկյան ռազմաբազաների տեղակայման քաղաքականությանն ուղղված քայլերը, դրանից բխող տարածաշրջանային անվտանգության և կայունության պահպանման ռիսկերը, Վրաստանի ռազմական հնարավորություններն ու ռազմատեխնիկայի արդիականացման հարցերը:

Հանգամանալից լուսաբանվում են այն փաստերն ու իրադարձությունները, որոնք վկայում են, որ Մ. Սաակաշվիլին ԱՄՆ աջակցությամբ 2004 թվականից պատրաստվել է պաշտոնական Թբիլիսիի վերահսկողությունից դուրս գտնվող տարածքների վերադարձմանը, անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ ուժի կիրարկման միջոցով, ինչպես նաև Վրաստանում կատարվող փոփոխությունների անդրադարձը հարևան երկրների, մասնավորապես՝ ՀՀ վրա: Հոդվածում մեծ տեղ է հատկացված կողմերի միջև կնքված պայմանագրերի նշանակության ու ազդեցության շրջանակների ուսումնասիրությանն ու վերլուծությանը: Ամբողջապես քննության առարկա են դարձել Վրաստանի և ԱՄՆ-ի միջև ռազմաքաղաքական հարաբերությունների մեկնարկը, խորացումն ու հետագա զարգացումները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված հետխորհրդային շրջանում Վրաստան-ԱՄՆ հարաբերությունների նպատակների ուսումնասիրմանը՝ տարածաշրջանի աշխարհաքաղաքական, էներգետիկ, հաղորդակցության ուղիների, հայեցակարգային և ռազմավարական հիմնախնդիրների առնչությամբ, ինչպես նաև քննարկվել է այդ հիմնախնդիրների ազդեցությունը երկու երկրների միջև փոխհարաբերությունների և տարածաշրջանային քաղաքականության վրա:

Զինված ուժերի և ռազմական տեխնիկայի վերադասավորումն ու բաշխումը տարածաշրջանում ամենաբարդ հիմնախնդիրներից են, քանի որ յուրաքանչյուր փոփոխություն կարող է հանգեցնել ուժերի հավասարակշռության խախտման: Անշուշտ, բոլոր փոփոխությունները թողնելու են իրենց հետևանքները, և զինված ուժերի վերադասավորումից է կախված լինելու տարածաշրջանի կայունության ու խաղաղության հարատևությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ երկրներում տեղի են ունեցել զինված ուժերի վերադասավորումներ և ռազմական տեխնիկայի բաշխումներ: ԽՍՀՄ ռազմական տեխնիկայի գերակշիռ մասը բաժին է ընկել Ռուսաստանի Դաշնությանը: Վերջինս՝ որպես իրավահաջորդ պետություն, կարողացել է պահպանել զինված ուժերի ներկայությունն արդեն անկախություն ձեռք բերած գրեթե բոլոր պետություններում, այդ թվում՝ ՀՀ-ում, Վրաստանում և Ադրբեջանում[1]: Սակայն տարիների ընթացքում տեղի են ունեցել Ռուսաստանի զինված

* Հոդվածը ներկայացվել է 03.03.2021 թ., գրախոսվել՝ 15.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Տե՛ս The Military Balance 1992-1993, The International Institute for Strategic Studies, Brassy, January 1, 1992, էջ 96-101:*

ուժերի վերադասավորումներ, ռազմական տեխնիկայի ու ռազմաբազաների վերաբաշխումներ, որոնց արդյունքում էլ մի շարք հետխորհրդային երկրներից դուրս են բերվել ռուսական զինված ուժերը, ռազմական տեխնիկան, և փակվել են ռազմաբազանները՝ իրենց տեղը զիջելով ինչպես ազգային բանակին, այնպես էլ այլ զինված ուժերի (ԱՄՆ, ՆԱՏՕ կամ նրանց դաշնակիցներ): Հատկանշական է, որ այս փոփոխություններն իրենց դրական կամ բացասական ազդեցություններն են ունենում տարածաշրջանային կայունության ու անվտանգության պահպանման համատեքստում:

Զինված ուժերի ամենախնդրահարույց վերադասավորումներն ու ռազմական տեխնիկայի բաշխումներն իրականացվել են կովկասյան տարածաշրջանում, քանի որ ՌԴ-ն, ՀՀ-ն, Վրաստանն ու Ադրբեջանն անկախության օրվանից ունեն ռազմական բախումների սառը և տաք օջախներ՝ Չեչնիա, Աբխազիա, Հարավային Օսեթիա, Արցախ, ուստի այս խնդիրները չէին կարող չանհանգստացնել Հարավային Կովկասի երկրներին, այդ թվում՝ ՀՀ-ին: Հարավային Կովկասում կատարվող ցանկացած փոփոխություն, որը կապված է զինված ուժերի, զենք ու զինամթերքի հետ, ուղիղ սպառնալիք է տարածաշրջանի կայունությանը, ՀՀ անվտանգությանն ու Վրաստանում բնակվող հայ համայնքի բնականոն կենսագործունեությանը: Կա նաև այլ խնդիր. ԱՄՆ աջակցությամբ Վրաստանի զինված ուժերում կատարվող «բարեփոխումները» և ՆԱՏՕ չափանիշների համապատասխանեցումը կարող են նոր սրացումներ ու անկայունություն հրահրել տարածաշրջանում: Եվ եթե Միացյալ Նահանգներին հաջողվեց Վրաստանում տեղակայել ռազմաբազա, ապա այն, անշուշտ, ուղղված է լինելու Իրանի Իսլամական Հանրապետության, ՌԴ ու նրա դաշնակիցների, այդ թվում՝ ՀՀ դեմ, քանի որ ռուսական 102-րդ ռազմաբազան տեղակայված է ՀՀ երկրորդ ամենամեծ քաղաքում՝ Գյումրիում[1]:

ԱՄՆ-ն նույնպես չէր կարող անմասն մնալ Հարավային Կովկասում կատարվող իրադարձություններից և 1991 թ. դեկտեմբերի 25-ին դե յուրե ճանաչելով բոլոր առանձնացված պետությունների անկախությունը՝ սկսեց երկկողմանի հարաբերություններ ստեղծել նորանկախ պետությունների հետ, սակայն Վրաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Վրաստանում քաղաքացիական պատերազմի պատճառով ձգձգվել է մինչև 1992 թ. առաջին կեսերը[2]: ԱՄՆ-ը, դիվանագիտական հարաբերություններ հաստատելով Վրաստանի հետ, երկկողմ ջերմ հարաբերությունների շնորհիվ կարողանում է ավել հեշտորեն տարածել իր ազդեցությունը տվյալ երկրում: Չնայած 1990-ական թթ. առաջին կեսերին ԱՄՆ հետաքրքրությունները մեծ չէին Վրաստանի նկատմամբ, քանի որ վերջինս, հետևելով տարածաշրջանի մյուս երկրներին, արդեն 1993 թ. անդամակցել էր 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելովեժյան համաձայնագրով ստեղծված ԱՊՀ-ին[3], այնուհետև՝ 1993 թ. դեկտեմբերին 9-ին՝ նաև 1992 թ. մայիսի 15-ին ստեղծված ՀԱՊ-ին[4], այնուամենայնիվ ԱՄՆ հետաքրքրությունը գնալով ավելանում է Վրաստանի նկատմամբ մի քանի պատճառներով. առաջին հերթին՝ Վրաստանի տարածքներով են անցնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, Բաքու-Թբիլիսի-Էրզրում ռազմավարական նշանակություն ունեցող նավթ ու գազ տեղափոխող խողովակները, որոնք ամբողջությամբ շրջանցում են ՌԴ-ն: Մյուս կարևոր հանգամանքը պայմանավորված է Վրաստանի աշխարհագրական բարենպաստ դիրքով, քանի

---

[1] *Տե՛ս Генеральное консульство России в Гюмри, Республика Армения, "102-ая Российская военная база", "историческая справка", հասանելի է՝ https://gyumri.mid.ru/ru/sootechestvenniki/102_aya_rossiyskaya_voennaya_baza/, 22.01.2020:*

[2] *Տե՛ս Office of the Historian, "The Collapse of the Soviet Union", Foreign Service Institute, հասանելի է՝ https://history.state.gov/milestones/1989-1992/collapse-soviet-union, 16.01.2020:*

[3] *Տե՛ս Интернет-портал СНГ, "Историческая справка", "Содружество независимых государств", հասանելի է՝ https://e-cis.info/page/3509/80648/, 23.01.2020:*

[4] *Տե՛ս Довгань Е.Ф., Розанов А.А., Организация Договора о коллективной безопасности (2002-2009 гг.), "Эволюция ОДКБ", Женевский центр по демократическому контролю над вооруженными силами, Минск: "Ковчег", 2010, էջ 12:*

որ Վրաստանի տարածքում է խաչվում «Նոր մետաքսե ճանապարհը», որի վերահսկողությունն ԱՄՆ-ը ցանկանում է իր ձեռքը վերցնել: Հաջորդ պատճառն այն է, որ ԱՄՆ-ը պատրաստ է իրականություն դարձնել այն բոլոր հնարավոր ծրագրերը, որոնք ՌԴ սահմանակից երկիրը կվերածեն հակառուսական քաղաքականություն վարող պետության: Պակաս կարևոր դրդապատճառ չէր նաև Հարավային Կովկասից ռուսական ռազմաբազաների դուրսբերման հանգամանքը, և այս պարագայում Վրաստանը կարող էր օրինակ ծառայել հարևան մյուս երկրների համար: Եվ, վերջապես, ամենակարևոր պատճառներից մեկն այն է, որ ԱՄՆ-ը, յուրաքանչյուր հնարավորություն օգտագործելով, ցանկանում է ռազմաբազա ունենալ հենց Վրաստանում, որի ներուժը կկարողանա օգտագործել Սառը պատերազմից ի վեր մրցակից կամ հակառակորդ Իրանի, ՌԴ-ի և Սիրիայի դեմ: Նույնիսկ Վրաստանի տարածքները կարող են միջանցք հանդիսանալ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների զինված ուժերի տեղաշարժերի համար, այդ թվում՝ դեպի Աֆղանստան: Վրաստանի նկատմամբ ԱՄՆ հետաքրքրությունների շրջանակի մեծացմանն են խթանում նաև ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների՝ ժամանակ առ ժամանակ սրացումները, ինչի պատճառով էլ ավելի է մեծանում Վրաստանի դերը տարածաշրջանում:

Պետք է արձանագրենք, որ ՌԴ-ը մի քանի ռազմաբազաներ և կարևոր ռազմական այլ օբյեկտներ ուներ Հարավային Կովկասի բոլոր երկրներում, որոնց ուշադրությամբ հետևում էր ԱՄՆ-ը: Օրինակ՝ Ադրբեջանում մինչև 2012 թ. ուներ Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայան (ռուս.՝ Габалинская радиолокационная станция), որի վարձակալության արժեքի բարձրացումից հետո կողմերի միջև պայմանագիրը չերկարաձգվեց[1]: Սակայն իրականությունն այլ էր. առաջին հերթին՝ Ադրբեջանի որոշ ռազմագետներ ու քաղաքական գործիչներ չէին բացառում, որ ռուսները կարող էին գաղտնալսել Ադրբեջանի բարձրաստիճան զինվորականներին և տրամադրել տվյալներ ՀՀ-ին, քանի որ ՌԴ-ը և ՀՀ-ը ռազմական դաշնակիցներ են ու ՀԱՊԿ անդամներ: ՌԴ-ի՝ Գաբալայից դուրս գալու դրդապատճառ կարող էր լինել նաև Աբխազիայի նախագահ Սերգեյ Բագապշի՝ Աբխազիայում նոր հակահրթիռային պաշտպանության ռադիոտեղորոշիչ կայաններ հիմնելու առաջարկն այն ժամանակ, երբ ԱՄՆ-ն ցանկություն էր հայտնել Եվրոպայում և Վրաստանում ռադիոտեղորոշիչ կայանների տեղակայման վերաբերյալ, իսկ Ռուսաստանին անհրաժեշտ էր պատասխան քայլ կատարել և ավելի հուսալի վայրում ունենալ նմանատիպ կայաններ[2]: Ռուսաստանի համար տարբերակ էր նաև ՀՀ-ում ժամանակակից նմանատիպ կայանների տեղակայումը: Իսկ Ադրբեջանին տարածքների վարձակալության արժեքի բարձրացմանը կարող էին դրդել ԱՄՆ-ն ու Թուրքիան, քանի որ Ռուսաստանը Գաբալայից հնարավորություն ուներ հետևելու ոչ միայն Թուրքիայի ու ՆԱՏՕ-ի հրթիռներին, այլև նրանց ռազմական տեխնիկայի ու զինված ուժերի տեղաշարժերին: Հատկանշական է, որ ԱՄՆ-ը նույնպես մեծ հետաքրքրություն ուներ Գաբալայի ՌՏԿ-ի նկատմամբ, որտեղից հնարավոր կլիներ հետևել Իրանի, Մերձավոր Արևելքի և Ասիայի որոշ երկրների գործողություններին, ինչպես նաև Պարսից ծոցում կատարվող իրադարձություններին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով վերոգրյալ բոլոր դրդապատճառները՝ ՌԴ-ը, 2013 թ. սկսած, ռազմական ոչ մի տեսակի ներկայություն այլևս չունի Ադրբեջանում, իսկ Թուրքիան ոչ մի կերպ չի հանդուրժի ԱՄՆ ակտիվությունն Ադրբեջանում[3]:

Իրավիճակը տարածաշրջանում այլ է Հայաստանի մասով: 2010 թ. օգոստոսի 20-ին ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի՝ ՀՀ կատարած պաշտոնական այցի ժամանակ ստորագրվել է դեռևս 1995 թ. Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքված «ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

---

[1] *Տե՛ս Алиев Е. Т., Габалинская РЛС; прошлое, настоящее, будущее, Центр по изучению проблем разоружения, энергетики и экологии при МФТИ, 2007, էջ 10:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 16:*

[3] *Տե՛ս Оруджев Р., Габалинская РЛС перестала служить России, Иносми.ру, 11.12.2012, հասանելի է՝ https://inosmi.ru/sngbaltia/20121211/203228042.html, 04.04.2020:*

արձանագրությունը, ըստ որի՝ 25 տարով երկարաձգվել է Գյումրու ռուսական 102-րդ ռազմաբազայի վարձակալությունը[1]: Սա նշանակում է, որ ՌԴ-ը Հարավային Կովկասում ՀՀ միջոցով ունենալու է ռազմաբազա մինչև 2044 թ., և չի բացառվում, որ մինչև պայմանագրի ավարտը կողմերը նորից այն կերկարացնեն: Հայաստանի հետ հարաբերություններում ԱՄՆ ռազմաքաղաքական ուղղության պասիվությունը կարող է պայմանավորված լինել հիմնականում երկու գործոնով. առաջինը՝ ՀՀ-ը ՌԴ ռազմավարական դաշնակիցն է, որի տարածքում առկա է ռուսական ռազմաբազա, և երկրորդ՝ ՀԱՊԿ անդամ են, ու ՌԴ ռազմաբազան՝ իր զինված ուժերով, պարտավորվում է անհրաժեշտության դեպքում հայկական զինված ուժերի հետ համատեղ ապահովել ՀՀ անվտանգությունը[2]:

Այսպիսով՝ կարող ենք հստակորեն ամրագրել, որ Հարավային Կովկասում ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման միակ հուսալի, հեռանկարային տարբերակը մնում էր Վրաստանը, որտեղ արդյունքի հասնելով՝ իրականություն էր դարձնելու կովկասյան տարածաշրջանում ռազմական տարրեր ունենալու քաղաքականությունը, որի միջոցով կկարողանար որոշակի վերահսկողություն իրականացնել ինչպես պետության ներսում կատարվող գործողությունների նկատմամբ, այնպես էլ արտաքին գործընկերներ ընտրելու հարցում: Իսկ դրան հասնելու համար ԱՄՆ-ին անհրաժեշտ էր ցանկացած գնով հրահրել Վրաստանի ղեկավարներին, որպեսզի վերջիններս պարտադրեն վերջնականապես հանել ՌԴ ռազմաբազաները, խաղաղապահ ուժերը և այլ տեսակի ռազմական տարր հանդիսացող օբյեկտները կամ ստորաբաժանումները Վրաստանի տարածքից, այդ թվում՝ Վազիանի, Ախալքալաքի, Բաթումի և Գուդաութա (Աբխազիա) ռազմաբազաները:

ԱՄՆ-ը Հարավային Կովկասի կարևոր դերի և նշանակության մասին պաշտոնապես բարձրաձայնել է միայն 1997 թ.՝ Բիլ Քլինթոնի վարչակազմի ժամանակ, երբ պարզ դարձավ, որ Բաքվից Վրաստանի տարածքներով նավթի խողովակները պետք է հասնեն Թուրքիայի Ջեյհան նավահանգիստ, որտեղից էլ՝ Եվրոպա և այլ երկրներ[3]: Բացառված չէր, որ այս նախագծին կարող էին միանալ նաև մերձկասպյան որոշ երկրներ, որոնք ունեին էներգետիկ մեծ պաշարներ: Այդուհանդերձ, ԱՄՆ-ն անմիջապես գործի անցավ իրականություն դարձնելու այն քաղաքական շահերը, որոնք որդեգրել էր Բ. Քլինթոնի վարչակազմը, և ԱՄՆ գործուն աջակցությամբ Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի ու Մոլդովայի նախագահների կողմից 1997 թ. հոկտեմբերի 10-ին Ստրասբուրգում ստեղծվեց «ՎՈՒԱՄ»[4] կազմակերպությունը, որի գործունեությունն ակնհայտորեն չէր բխում Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական շահերից՝ անկախ այն իրողությունից, որ գործում էր ԱՊՀ շրջանակներում: ԱՄՆ-ը հեռահար նպատակ ուներ՝ «ՎՈՒԱՄ»-ի միջոցով զինված ուժեր տեղակայելու այն տարածքներում, որտեղով անցնում են խոշոր նախագծեր, ինչպես օրինակ՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, Բաքու-Թբիլիսի-Էրզրում և այլն: Այս առիթով տարբեր ժամանակներում ԱՄՆ-ն անուղղակիորեն հանդես է եկել ՎՈՒԱՄ-ի հետ համագործակցության շրջանակներում Վրաստանի տարածքով անցնող նավթատար խողովակների անվտանգությունն ապահովելու համար ամերիկյան հատուկ զինված ուժերի տեղակայման անհրաժեշտության մա-

---

[1] *Տե՛ս "Советские и российские военные базы за рубежом", РИА Новости, 07.10.2016, հասանելի է՝ https://ria.ru/20161007/1478745559.html, 17.04.2020:*

[2] *Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության գործունեության հաշվետվությունը, 2010, էջ 8, հասանելի է՝ https://www.mfa.am/filemanager/Statics/report2010.pdf, 18.04.2020:*

[3] *Տե՛ս Гусейнов В., Денисов А., Романов А., Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992–2008 годы), Военно - политическое и военно - стратегическое измерение, Москва, 2008, էջ 164:*

[4] *Տե՛ս ძაძუა კომახია, სუუამი - შექმნის ისტორია და განვითარების პერესპექტივების, საქართველოს სტრატეგიული კვლევების და განვითარების ცენტრი, ბიულეტენი N69, ივნისი 2002 წ., էջ 5 (Մամուկա Կոմախիա, «ՎՈՒԱՄ – ստեղծման պատմությունը և զարգացման հեռանկարները», Վրաստանի ռազմավարական հետազոտությունների և զարգացման կենտրոն, տեղեկագիր N69, 2002 թ. հունիս):*

սին, ինչպես նաև առևտրի և տրանսպորտի հեշտացման, սահմանների և մաքսային հսկողության ապահովման, ահաբեկչության, կազմակերպված հանցավորության և թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղություններով[1]:

ԱՄՆ-ը, վերլուծելով Վրաստանում կատարվող իրավիճակը, գիտակցում էր, որ Վրաստանի ռեսուրսները չէին բավականացնելու նավթատար խողովակների անվտանգությունն ապահովելու համար, իսկ Ադրբեջանի ու Թուրքիայի զինված ուժերի ներկայությանը դեմ էին արտահայտվելու տեղի բնակիչները, հատկապես՝ Ախալքալաքի, Ախալցխայի ու Բորժոմի հատվածներում: Չնայած գործադրած բոլոր ջանքերին՝ ՎՈՒԱՄ-ի հետ կապված ԱՄՆ հեռահար ցանկությունները դեռևս չեն կատարվել, քանզի այս կազմակերպությունն այդպես էլ լուրջ դերակատարում չունեցավ տարածաշրջանում, սակայն ժամանակ առ ժամանակ ակտիվանում է՝ անդամ երկրների քաղաքական շահերից ելնելով: ԱՄՆ աջակցությամբ ՎՈՒԱՄ-ի ստեղծումը և Վրաստանի՝ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հակամարտություններով պայմանավորված դժգոհությունները ՌԴ-ից հանգեցրին նրան, որ Վրաստանը 1999 թ. ապրիլին դուրս եկավ ՀԱՊ-ից, և նրան հետևեցին նաև Ադրբեջանն ու Ուզբեկստանը[2]: Պայմանագրից Վրաստանի դուրս գալը մեծ մասամբ պայմանավորված էր նաև Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցության ձգտումներով և վրաց-ռուսական հակասություններով, հիմնականում Աբխազիային, Հարավային Օսեթիային և Աջարիային առնչվող հիմնախնդիրները Վրաստանի օգտին չլուծելու պատճառով: Ակնհայտ է, որ Ռուսաստանի իշխող շրջանակները, աջակցելով Վրաստանի ղեկավարության դեմ հանդես եկող որոշակի ուժերին, փորձեցին ազդել այս երկրի քաղաքականության վրա, որը ռազմավարական առումով զբաղեցնում է կարևոր աշխարհագրական դիրք, սակայն, անարդյունք: Անկախության առաջին տարիներից սկսած՝ Վրաստանը չի թաքցրել Արևմուտքի նկատմամբ ունեցած քաղաքական շահերը և ՆԱՏՕ-ին ինտեգրվելու իր ցանկությունը: Երբ հարց առաջացավ ռազմավարական գործընկերների ընտրության հարցում, նա միանշանակ և բացահայտորեն ապավինեց Արևմուտքին:

1999 թ. նոյեմբերի 17-ին Ստամբուլում Վրաստանն ու ՌԴ-ը, միանալով ԵԱՀԿ գագաթաժողովի հայտարարությանը, պարտավորվեցին նվազեցնել իրենց ռազմական տեխնիկան ու զինամթերքը: Հատկապես Ռուսաստանը որոշակի ժամանակահատվածում պետք է ռազմական տեխնիկան և զինված ուժերը տեղափոխեր Վրաստանի տարածքներից դուրս, իսկ Վրաստանն էլ իր հերթին պետք է աջակցեր նրան այս հարցում[3]: Վրաստանի տարածքներից ռուսական ռազմաբազաների դուրսբերումը մեծ հարված էր հասցնելու հատկապես Ախալքալաքի բնակչությանը, ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ՝ անվտանգության առումով, քանի որ Ախալքալաքի բնակիչներից շատերը աշխատում էին ռուսական ռազմաբազայում, և այն հիմնական երաշխավորն էր հարևան Թուրքիայի հետագա հնարավոր վտանգներից պաշտպանելու նկատառումներով: Փաստացի Վրաստանի և ՌԴ-ի ռազմաքաղաքական հարաբերությունները գնալով վատթարանում էին, փոխարենը ավելի էին ջերմանում Վրաստան-ԱՄՆ ռազմաքաղաքական հարաբերությունները:

Չնայած 2000 թ. ԱՄՆ-ում 43-րդ նախագահ էր ընտրվել հանրապետական Ջ. Բուշ Կրտսերը, այնուամենայնիվ նոր վարչակազմի համար նույնպես ԲԹՋ նախագիծը ռազմավարական նշանակություն ունեցավ՝ ավելի ընդլայնելով հետաքրքրությունների շրջանակը

---

[1] *Տե՛ս Организация за демократию и экономическое развитие – ГУАМ, Международное сотрудничество, ГУАМ и США, Совместное заявление, guam-organization.org, հասանելի է՝ https://guam-organization.org/guam-i-ssha/, 29.01.2020:*

[2] *Տե՛ս Довгань Е., Розанов А., указ. соч., էջ 20:*

[3] *Տե՛ս Organization for Security and Co-operation in Europe, Istanbul Summit 1999, Istanbul Document 1999, "Joint Statement of the Russian Federation and Georgia, Istanbul, 17 November 1999", Istanbul, 1999, էջ 252, հասանելի է՝ https://www.osce.org/mc/39569?download=true, 12.02.2020:*

Հարավային Կովկասում[1]: Հենց Բուշի ղեկավարման տարիներից է սկսվում ԱՄՆ «զավթողական» արտաքին քաղաքականությունը բոլոր ուղղություններով՝ տնտեսական, ռազմական, քաղաքական և այլն: Բուշ Կրտսերի ղեկավարման առաջին տարիներին տեղի ունեցած աղետալի ահաբեկչությունը (2001 թ. սեպտեմբերի 11-ին)[2] պատեհ առիթ հանդիսացավ որդեգրելու ԱՄՆ արտաքին «զավթողական» քաղաքականությունն այն երկրների նկատմամբ, որտեղից երկիրը ահաբեկչության վտանգ էր տեսնում, և նրանց հետ կապ ունեցող որոշ երկրների, այդ թվում՝ Վրաստանի ու Ադրբեջանի նկատմամբ: Սակայն բացառություն էր ՀՀ-ն, քանի որ այն շարունակում է մնալ ՌԴ-ի հետ ռազմական դաշնակից և հավատարիմ գործընկեր, իսկ ԱՄՆ-ն չէր ցանկանում ակնհայտ գնալ առճակատման ՌԴ հետ:

Ջ. Բուշը 2001 թ.՝ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո, ուժը կորցրած ճանաչեց ԱՄՆ ազատության աջակցության մասին կարգի 907-րդ կետը, որով արգելվում էին Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունների խորացումը և ֆինանսական աջակցության տրամադրումը, քանի որ Ադրբեջանը ՀՀ և ԼՂՀ նկատմամբ կիրառում է քաղաքական ու տնտեսական շրջափակում[3]: Իսկ ավելի ուշ՝ 2005 թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին, Բուշը հրապարակավ խոսեց ԱՄՆ-ի և Ադրբեջանի հարաբերությունները ռազմավարական նոր մակարդակի բարձրացնելու հնարավորության մասին[4]:

ԱՄՆ-ի համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին նաև Վրաստանի տարածքով ռազմական տեխնիկա, զենք-զինամթերք և զինված ուժեր ազատ տեղաշարժելու համար, քանի որ Վրաստանի երկրորդ նախագահ Է. Շևարդնաձեն Նյու Յորքում տեղի ունեցած ահաբեչությունից հետո ԱՄՆ կատարած այցի ժամանակ՝ Ֆ. Ջ. Քենեդու անվան քաղաքական դպրոցում դասախոսություն կարդալու ընթացքում, առաջարկեց ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին ազատորեն օգտագործել Վրաստանի տարածքը՝ ռազմական նպատակները, հատկապես՝ Իրաքում, Աֆղանստանում և Վրաստանում ահաբեկչության դեմ պայքարն իրականացնելու համար[5]: ԱՄՆ-ը, այս հնարավորությունն օգտագործելով, «Ուսուցանել և վերազինել ծրագրի» (“Georgia Train and Equip Program - GTEP”) շրջանակներում Վրաստան է ուղարկել հատուկ պատրաստված 200 զինվորականների, որոնք պետք է վրաց զինված ուժերին պատրաստեին ահաբեկիչների դեմ պայքարի[6]: Փաստացի, սա միջոց էր ԱՄՆ զինված ուժերի ներկայությունը Վրաստանում ապահովելու համար, ինչն էլ արդեն հանգեցնում էր Վրաստանում զինված ուժերի վերադասավորման: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Վրաստանում ԱՄՆ ռազմական ներկայությունն անշրջելի իրողություն էր այն պարագայում, երբ ՌԴ-ը նույնպես ուներ ռազմական ներկայություն: Դեռ ավելին՝ GTEP ծրագիրն իրականացվելու էր ԱՄՆ ռազմական մասնագետների կողմից Վրաստանի Վազիանի ռազմաբազայում, որտեղ մինչ այդ տեղակայված էր ռուսական ռազմաբազան[7]:

---

[1] *Տե՛ս გია ჯოხთაბერიძე, “რკინის ფარდიდან აბრეშუმის გზამდე”, “ედუარდ შევარდნაძის პოლიტიკური მოღვაწეობა”, თბილისი 2018, էջ 76 (Զոխթաբերիձե Գիա, «Երկաթե վարագույրից մինչև Մետաքսի ճանապարհ», «Էդուարդ Շևարդնաձեի քաղաքական գործունեությունը», Թբիլիսի, 2018):*

[2] *Տե՛ս Chalk P., Hoffman B., Reville R., Kasupski Anna-Britt, Trends in Terrorism, “Threats to the United States and the Future of the Terrorism Risk Insurance Act”, The RAND Center for Terrorism Risk Management Policy (CTRMP), 2005, էջ 12:*

[3] *Տե՛ս Senator John F. Kerry and Section 907, “Original writer and chief proponent of the Section 907 of the Freedom Support Act (FSA) of 1992”, Senate - October 01, 1992:*

[4] *Տե՛ս Jackson Diehl, An Oil-Rich Test for Bush, The Washington Post, October 24, 2005, հասանելի է՝ https://www.washingtonpost.com/archive/opinions/2005/10/24/an-oil-rich-test-for-bush/f4340c53-b262-471b-8a8e-06c2248bedce/, 12.02.2020:*

[5] *Տե՛ս გია ჯოხთაბერიძე, “რკინის ფარდიდან აბრეშუმის გზამდე”, “ედუარდ შევარდნაძის პოლიტიკური მოღვაწეობა”, თბილისი 2018, էջ 78-79 (Զոխթաբերիձե Գ., նշվ. աշխ.):*

[6] *Տե՛ս David Josar, “First Georgian soldiers graduate from U.S.-sponsored training program”, Stars and Stripes, December 17, 2002, հասանելի է՝ https://www.stripes.com/news/first-georgian-soldiers-graduate-from-u-s-sponsored-training-program-1.300, 13.02.2020:*

[7] *Տե՛ս US Military Experts Inspect Vaziani Base, Civil.ge, 09/05/2002, հասանելի է՝ https://civil.ge/archives/101638, 15.02.2020:*

Վրաստանի ռազմաքաղաքական համագործակցության նպատակները կտրուկ փոխվեցին 2003 թ. նոյեմբերին տեղի ունեցած «Վարդերի հեղափոխությամբ» իշխանության եկած «Միացյալ ազգային շարժում» կուսակցության ղեկավար Մ. Սաակաշվիլու արտաքին քաղաքականության հետևանքով[1]: Սաակաշվիլին 2004 թ.՝ երդմնակալության ժամանակ, նշեց երկրի անվտանգության և կայունության պահպանման համար ազգային նոր բանակի կայացման և զարգացման անհրաժեշտության մասին[2]: Չնայած Վրաստանի նորընտիր ղեկավարները երկրի անվտանգության պահպանման նկատառումներով հայտարարում էին ՆԱՏՕ-ի ու ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական համագործակցության խորացման կարևորության մասին, սակայն Վրաստանը, լինելով ԱՊՀ պաշտպանության նախարարության խորհրդի անդամ, դժվարանում էր վճռական որոշումներ կայացնել, հատկապես, երբ հարցը վերաբերում էր Ռուսաստանի դեմ ուղղված գործողություններին: Հավանաբար անհրաժեշտ էր հակառուսական լուրջ քայլեր ձեռնարկել՝ ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական հարաբերություններն ամրապնդելու և խորացնելու համար:

2004 թ. փետրվարի 25-ին նախագահ Սաակաշվիլին ԱՄՆ կատարած առաջին պաշտոնական այցի ժամանակ հանդիպեց Ջ. Բուշին: Վերջինս Վրաստանում ռուսական ռազմաբազաների վերաբերյալ լրագրողների հարցերին պատասխանելիս հստակորեն ասել է, որ հետամուտ են լինելու Ստամբուլում ձեռք բերված համաձայնության բոլոր կետերի կատարմանը, որով ՌԴ-ը պարտավորվել էր փակել ռուսական ռազմաբազաներն ու վերջնականապես լքել Վրաստանի տարածքը, միևնույն ժամանակ կոչ է արել կողմերին՝ ՌԴ-ին և Վրաստանին, պահպանել ջերմ ու խաղաղ հարաբերություններ, ինչպես նաև համատեղ պայքարել ահաբեկչության դեմ[3]: Նա խելացի քայլ է որակել Սաակաշվիլիի՝ առաջինը Ռուսաստան այցելելու որոշումը: Սա, իհարկե, քաղաքական բարի կամքի դրսևորման ձև էր, մինչդեռ ԱՄՆ-ը միշտ էլ նպատակ է ունեցել Ռուսաստանին ընդդիմացող ժողովրդի ու նոր իշխանությունների հետ ջերմ հարաբերությունների շնորհիվ հասնելու նրան, որ ՌԴ-ը փակի իր ռազմաբազաները՝ ամբողջովին տեղափոխելով ռազմական տեխնիկան տվյալ երկրի տարածքից դուրս: Այս մրցակցությունը գալիս է դեռևս Սառը պատերազմի տարիներից:

Եվրոպայում ՆԱՏՕ-ի դաշնակիցների զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, ԱՄՆ գեներալ Ջեյմս Ջոնսը 2005 թ. մարտի սկզբներին՝ Սենատում լսումների ժամանակ, անկեղծորեն ասել է, որ ԱՄՆ-ի ռազմական բարձրագույն ղեկավարության համար Կովկասը ռազմավարական առումով համարում է աշխարհի կարևորագույն տարածաշրջաններից մեկը[4]: Ըստ նրա՝ Պենտագոնը Կովկասը համարում է նաև առանցքային աշխարհագրական կետ Կենտրոնական և Հարավարևմտյան Ասիայի երկրներում ժողովրդավարության և շուկայական տնտեսության տարածման գործընթացում: Ընդգծել է նաև Վաշինգտոնի մերձկասպյան ածխաջրածնային պաշարների արտահանման առաջնահերթությունը կովկասյան տարածաշրջանով (ԲԹՋ նավթամուղի միջոցով) արտաքին շուկա: Այս նախագիծը պետք է դիվերսիֆիկացներ Եվրոպայի էներգետիկ մատակարարումը:

Ընդհանուր առմամբ՝ Վրաստանում Սաակաշվիլիի վարչակազմի իշխանության գալուց սկսած՝ արագորեն մեծանում էր ամերիկյան գործոնը տարածաշրջանում՝ հասնելով

---

[1] *Տե՛ս Дарчиашвили Д., Государственность и безопасность: Грузия после "Революции роз", "Оборонная политика Грузии и военная реформа", Исследования Американской академии по проблемам глобальной безопасности, Лондон, 2005, էջ 146:*

[2] *Տե՛ս საქართველოს პრეზიდენტები, ძიხეილ სააკაშვილის ინაუგურაცია, 2004 წლის 25 იანვარი, (Վրաստանի նախագահներ, Միխեիլ Սաակաշվիլիի երդմնակալությունը, 25-ը հունվարի 2004 թ.), հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=Pu16jnY47gE, 05.03.2020:*

[3] *Տե՛ս "President Bush Welcomes Georgian President Saakashvili to White House", The White House, February 25, 2004, հասանելի է՝ https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2004/02/20040225-1.html, 09.03.2020:*

[4] *Տե՛ս Текст: Богданов В., США присматриваются к Закавказью, "Главком силами НАТО в Европе обозначил новые приоритеты Вашингтона", Российская газета - Федеральный выпуск № 0(3713), 04.03.2005:*

նույնիսկ այն մակարդակի, որ Ռուսաստանը մտահոգություն էր հայտնում ԱՄՆ-ի կողմից ռազմաբազաների տեղակայման վերաբերյալ, սակայն 2005 թ. մարտի 9-ին ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնականի տեղակալ Ջոն Թեֆֆթը, հղում անելով մարտի 8-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի դիրքորոշմանը, հավաստիացրել է, որ ԱՄՆ-ը Վրաստանում ռազմակայաններ հիմնելու որևէ ծրագիր չունի[1]: Անշուշտ, նմանօրինակ քննարկումները տարբեր հարթակներում միտված են լինում՝ ընկալելու մյուս երկրների վերաբերմունքն իրենց կողմից առաջ քաշված հարցերի, այս համատեքստում՝ մասնավորապես ՌԴ-ի նկատմամբ: Իսկ Վրաստանում ամերիկյան ռազմաբազաներ հիմնելու կապակցությամբ ՌԴ-ի կողմից հասցեական մեղադրանքները պայմանավորված էին 2005 թ. Վրաստանի պահպանման և կայունության գործողությունների ծրագրի (Georgia Sustainment and Stability Operations Program - GSSOP) մեկնարկով, որը, ըստ երևույթին, GTEP ծրագրի տրամաբանական շարունակությունն էր[2]: 64 մլն դոլար արժողությամբ այս ծրագիրը իրականացվելու էր ԱՄՆ եվրոպական հրամանատարության կողմից 15 ամիսների ընթացքում, որին հաջորդելու էր ծրագրի երկրորդ փուլը՝ մինչև 2007 թ. ամառ, և մինչև 70 ամերիկացի զինծառայողներ՝ բոլոր ռազմական մասնաճյուղերից, ցանկացած պահի պետք է ուղևորվեին Վրաստանի Կրծանիսիի ազգային վերապատրաստման կենտրոն, որտեղ վերապատրաստելու և վերազինելու էին ավելի քան 1200 վրացի զինվորների (ցամաքային մարտական հմտություններ և մարտավարություն, ներառյալ առաջին բուժօգնություն)[3]: Նախատեսվում էր տեսական և գործնական պարապմունքների միջոցով բարձր պատրաստվածության մակարդակի բերել վրաց երկու գումարտակների զինծառայողներին, որոնք մեկնելու էին Իրաք՝ աջակցելու «ազատության» գործողություններին:

2005 թ. մայիսին Ջ. Բուշ Կրտսերի՝ Վրաստան կատարած պաշտոնական այցը ոչ միայն պատմական էր, այլև ամերիկյան նոր ցանկությունների և նպատակների արտահայտման իրողության փաստարկում էր[4]: Նախագահ Բուշի այցը վստահություն և նոր եռանդ հաղորդեց վրաց ժողովրդին և կառավարությանը՝ ավելի վճռական լինելու ՌԴ-ի հետ հարաբերությունների վերանայման հարցում: Թբիլիսիի Ազատության հրապարակում նախագահ Բուշի ելույթից ընդամենը երկու օր անց՝ մայիսի 12-ին, ԱՄՆ Սենատն ընդունեց Վրաստանից ՌԴ զորքերի դուրսբերման հարցում աջակցության վերաբերյալ S. RES. 139 բանաձևը[5]: Սա ևս մեկ փաստ է՝ եզրահանգելու, որ ԱՄՆ-ը ցանկանում էր ՌԴ զորքերի՝ հնարավորինս շուտ դուրսբերումը Վրաստանից՝ առանց հաշվի առնելու տարածաշրջանի կայունության պահպանման վտանգները: Սաակաշվիլիի վարչակազմի համար մեծ ձեռքբերում

---

[1] *Տե՛ս U.S. Official: No Plans to Station U.S. Bases in Georgia, Civil.ge, 09/03/2005, հասանելի է՝ https://civil.ge/archives/107510, 14.07.2020:*

[2] *Տե՛ս Ministry of Defence of Georgia, Cooperation with the United States, Development of Georgia-U.S. Bilateral Cooperation, հասանելի է՝ https://mod.gov.ge/en/page/119/cooperation-with-the-united-states,08.08.2020:*

[3] *ԱՄՆ եվրոպական հրամանատարության գործողությունների բաժնի միջազգային գծով ղեկավար փոխգնդապետ Չաք Հենսլիի կարծիքով՝ այս ծրագիրը դասական օրինակ է կոալիցիայի ձևավորման և միջազգային փոխըմբռնման խթանման համար: Կարճաժամկետ հեռանկարում Վրաստանը Իրաքին տրամադրում է երկու գումարտակ, որոնք ԱՄՆ-ը չունի: Դա թույլ էր տալու հրամանատարությանը կենտրոնանալ այլ ոլորտներում առաջացած խնդիրների վրա: Իսկ երկարաժամկետ հեռանկարում Վրաստանը ստանալու էր ավելի լավ պատրաստված վինված ուժեր, որ այդ պահին կազմում էր շուրջ 22.000: Իսկ Մայոր Դուգ Պետերսոնը հավաստիացնում էր, որ վրացական վինված ուժերը հնարավորություն են տալիս կայունություն հաստատելու կովկասյան տարածաշրջանում: Տե՛ս U.S. Department of Defense, "Training for Iraq Boosts Security in Caucasus", DoD News, June 28, 2005, հասանելի է՝ https://archive.defense.gov/news/newsarticle.aspx?id=16284, 09.08.2020:*

[4] *Տե՛ս რევაზ ქოიავი, ედიშერ ბაღათურია, იულია ნიკიტინა, "საქართველო და რუსეთი: ორმხრივი ხედვა მეოთხედი საუკუნის ურთიერთობებზე", კვლევის ანგარიში, კავკასიური სახლი, 2017, էջ 34 (Քոյավի Ռ., Բաղաթուրիա Է., Նիկիտինա Յ., Վրաստան և Ռուսաստան. երկկողմ տեսակետներ քառորդ դար հարաբերություններում, հետապոտական վեկույց, Կովկասյան տուն, 2017):*

[5] *Տե՛ս 109th Congress, 1st Session, in the US Senate, Resolution - S. RES. 139; Expressing support for the withdrawal of Russian troops from Georgia, sponsored by Harry Reid (D-NV) and William Frist (R-TN), 12 May, 2005, հասանելի է՝ https://www.congress.gov/bill/109th-congress/senate-resolution/139 , 22.07.2020:*

էր նաև 2005 թ. հուլիսի 8-ին ԱՄՆ աջակցությամբ Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգի ձևավորումը, որտեղ վերջնականապես ամրագրվեցին ԱՄՆ-ի՝ ռազմավարական դաշնակից լինելու փաստը և ՆԱՏՕ-ին անդամակցելու առաջնահերթությունը[1]: Ըստ հայեցակարգի 5.5.1. կետի՝ Վրաստանը շարունակելու է զարգացնել ռազմավարական գործընկերությունը ԱՄՆ-ի հետ, քանի որ անկախությունից ի վեր ակտիվորեն աջակցել է վրաց պետականությանը, ժողովրդավարությանը, պաշտպանությանը և տնտեսական զարգացմանը, ինչպես նաև եվրատլանտյան կառույցներին անդամակցելու ձգտումներին[2]:

Վրաստանի պաշտպանական հնարավորությունները զգալիորեն ամրապնդվել են ԱՄՆ աջակցությամբ՝ GTEP և SSOP ծրագրերի միջոցով: Այս ծրագրերով պատրաստված և վերազինված ստորաբաժանումները վրացական բանակի հիմքն են: Իսկ Վրաստանը իր հերթին ակտիվորեն շարունակում է քաղաքական և ռազմական աջակցություն ցուցաբերել ԱՄՆ-ի գլխավորած հակաահաբեկչական կոալիցիային: ԱՄՆ-ի կողմից վերապատրաստված ստորաբաժանումները հաջողությամբ մասնակցում են հակաահաբեկչական և խաղաղապահ առաքելություններին ինչպես Վրաստանում, այնպես էլ արտերկրում:

2005 թ. նոյեմբերի 1-ին Սաակաշվիլիի վարչակազմին հաջողվեց Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգի հիման վրա ձևավորել նաև Վրաստանի ազգային ռազմական ռազմավարություն, որի միջոցով իրականացվելու էին վրացական զինված ուժերի բարեփոխումները[3]: Այդ ռազմավարությամբ՝ երկրում սպառնալիքների և մարտահրավերների աճը, դրանց կանխատեսման դժվարությունը և տարածաշրջանային ծանր իրավիճակը Վրաստանին մղում են անվտանգության ոլորտում ակտիվորեն համագործակցելու միջազգային հանրության հետ: Ըստ այդմ՝ Վրաստանի պաշտպանական քաղաքականության հիմնասյունը հանդիսացող տարածքային պաշտպանության սկզբունքից անցում է կատարվում դեպի հավաքականի: Ելնելով վերը նշվածից՝ Վրաստանի զինված ուժերն ակտիվորեն ներգրավված են գործընկեր երկրների կոալիցիոն ուժերի գործողություններում և ծրագրել են կարճաժամկետ հեռանկարում անդամակցել ՆԱՏՕ-ին: Վրաստանի պաշտպանական քաղաքականությունը կենտրոնանում է հիմնականում Զինված ուժերի ռազմական կարողությունների դինամիկ զարգացման վրա՝ որպես ՆԱՏՕ-ի ինտեգրման գործընթացի մաս: Վրացական զինված ուժերը պետք է կարողանան պրոֆեսիոնալ մակարդակով մասնակցել միջազգային ռազմական գործողություններին՝ հասնելով լիակատար համատեղելիության ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի ուժերի հետ: Հաշվի առնելով այս տեսակի առաքելությունների քաղաքական հետևանքները՝ Վրաստանի զինված ուժերը ձեռք են բերում միջազգային ճանաչում: Հետևաբար այն ստորաբաժանումների պատրաստումը, որոնք հետագայում մասնակցելու են նման առաքելություններին, համարվում է առաջնահերթություն:

Վրաստանը, հայեցակարգային ու ռազմավարական փաստաթղթերի ձեռքբերումից զատ, Վարդերի հեղափոխությունից հետո ԱՄՆ-ի կողմից ամենամեծ ռազմական աջակցություն ստացող երկիրն է Հարավային Կովկասում, օրինակ՝ 2006 թ. փետրվարի 6-ին ԱՄՆ

---

[1] Պետք է նշենք նաև, որ 2005 թ. Ազգային անվտանգության հայեցակարգով՝ Վրաստանի ռազմավարական դաշնակից էր ոչ միայն ԱՄՆ-ը, այլև Թուրքիան և Ուկրաինան, իսկ ՌԴ-ն, ՀՀ-ն և Ադրբեջանը՝ միայն գործընկերներ: Տե՛ս Սաքարթվելոյոս Սաջանոնմդեբլո մացնե, Սաքարթվելոյոս Յարլամենտիս դադգենիլեբա, "Սաքարթվելոյոս երովնული უსაფრთხოების კონცეფციის" დამტკიცების შესახებ, դոկումենտիս նոմերი; №1895–რს, თბილისი, 2005 წლის 8 ივლისი, սարեգիստրացիո կոդի; 000000.00(0).000.000000 (Վրաստանի օրենսդրական տեղեկագիր, Վրաստանի խորհրդարանի որոշում, «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգը» հաստատելու մասին, փաստաթղթի համարը՝ №1895-RS, Թբիլիսի, 8-ը հուլիսի, 2005, գրանցման ծածկագիր՝ 000000.00 (0) .000.000000):

[2] Տե՛ս նույն տեղում 5.5.1. կետը:

[3] Տե՛ս Սաքարթվելոյոս Սաջանոնմդեբլո մացնե, Սաքարթվելոյոս Յրեզիդենտիս ბრძანებულება №912, Սաքարթվելոյոս երովնული სამხედრო სტრატეგიის დამტკიცების შესახებ, դոկումենտիս նոմերი; 912, ქ. თბილისი, 2005 წლის 1 ნოემბერი, սարեգիստրացիո կոդი;120.170.010.08.002.003 (Վրաստանի օրենսդրական տեղեկագիր, Վրաստանի նախագահի հրամանագիր №912, «Վրաստանի ազգային ռազմական ռազմավարության հաստատման մասին», փաստաթղթի համարը՝ 912, ք. Թբիլիսի, 01-ը նոյեմբերի, 2005 թ., գրանցման ծածկագիր՝ 120.170.010.08.002.003), էջ 6 և 14:

Կոնգրեսին ներկայացված 2007 ֆինանսական տարվա բյուջեի նախագծով Վրաստանին հատկացվել է 10 մլն դոլար ռազմական աջակցություն և ևս 1,235 մլն դոլար՝ միջազգային ռազմական կրթության և ուսուցման ծրագրով, Ադրբեջանին՝ 4,5 մլն և 885 հազար դոլար, Հայաստանին՝ 3,5 մլն և 790 հազար դոլար[1]: ԱՄՆ-ի ռազմական և ռազմավարական ծրագրերում Հարավային Կովկասը գնալով ավելի մեծ դեր է խաղում, իսկ զինված ուժերի ներկայությունը տարածաշրջանային երկրներում աստիճանաբար աճում է: Բացի դրանից՝ Վրաստանի բանակի կայացման և զարգացման համար Սաակաշվիլիի վարչակազմն ակնկալում էր ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և նրանց դաշնակիցների գործուն աջակցությունը, ուստի 2006 թ. Վրաստանը պաշտոնապես դուրս եկավ ԱՊՀ պաշտպանության նախարարների խորհրդի[2] կազմից՝ պատճառաբանելով, որ նրանք չեն կարող միաժամանակ համագործակցել երկու տարբեր ռազմաքաղաքական կառույցների հետ: Վրաստանի կողմից կատարված այս քայլը խթանեց ռուս-վրացական հարաբերությունների լարվածության մեծացմանը: Այնուհետև՝ 2006 թ. մարտի 31-ին, Սոչիում (ՌԴ) Վրաստանի և Ռուսաստանի միջև կնքվել է Վրաստանի տարածքներից ռուսական ռազմաբազաների դուրսբերման ժամկետի վերաբերյալ պայմանագիր, ըստ որի՝ ռուսական կողմը պարտավորվում էր մինչև 2007 թ. դեկտեմբերի վերջ դուրս բերել Բաթումի, Ախալքալաքի և մյուս ռազմաբազաները[3]: Սրան զուգահեռ կողմերը ստորագրել են նաև Վրաստանի տարածքով ռազմական բեռների և անձնակազմի տարանցման կազմակերպման վերաբերյալ պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով, որը ենթադրում էր Գյումրիում (ՀՀ) գտնվող ՌԴ պաշտպանության նախարարության 102-րդ ռուսական ռազմակայանի կադրային, նյութական, տեխնիկական ապահովում[4]:

Սոչիում կնքված պայմանագրից հետո՝ 2006 թ. հուլիսի 3-ին, Սաակաշվիլին աշխատանքային այց կատարեց ԱՄՆ և այստեղից վերադառնալով Թբիլիսի՝ հուլիսի 12-ին լրագրողներին հայտնեց, որ Վաշինգտոնում հանդիպում է ունեցել ոչ միայն նախագահ Բուշի, այլև փոխնախագահ Դիկ Չեյնի, բանակի շտաբի պետ Պիտեր Շումեյկերի (Peter Schoomaker; Chief of Staff of the United States Army), պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի (Secretary of Defense), Էներգետիկայի նախարար Սամուել Բոդմանի (Secretary of Energy) և այլ պաշտոնատար անձանց հետ[5]: Ըստ երևույթին՝ Սաակաշվիլին Վաշինգտոնում քննարկել է ռուսական ռազմաբազաների դուրսբերումից հետո Վրաստանի անվտանգությանը վերաբերող նոր մարտահրավերներում ԱՄՆ հնարավոր աջակցության ձևաչափերը՝ անկախ նրանից՝ դա կլինի ուղղակի, թե անուղղակի: Չի բացառվում, որ աշխատանքային այցի ընթացքում պաշտոնյաները քննարկել են նաև Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամության, ԲԹՋ նավթատարի անվտանգության, բանակի մարտունակության բարձրացման

---

[1] *Տե՛ս Денисов А., Савкин Н., Холоден П., Южный Кавказ: тенденции и проблемы развития (1992-2008 годы), Геополитическое измерение, Москва, 2008, էջ 37:*

[2] *Տե՛ս "Грузия 18 августа официально покинула СНГ", РИА Новости, Тбилиси, 18.08.2009, հասանելի է՝ https://ria.ru/20090818/181336573.html, 04.03.2019:*

[3] *Տե՛ս Socor V., Agreement Signed on Russian Military Withdrawal from Georgia, The Jamestown Foundation, Global Research & Analysis, April 4, 2006, հասանելի է՝ https://jamestown.org/program/agreements-signed-on-russian-military-withdrawal-from-georgia/, 21.06.2020*

[4] *Տե՛ս საქართველოს საკანონმდებლო მაცნე, შეთანხმება, საქართველოსა და რუსეთის ფედერაციას შორის საქართველოს ტერიტორიის გავლით სამხედრო ტვირთებისა და პერსონალის ტრანზიტის ორგანიზების შესახებ. 31/03/2006, სარეგისტრაციო კოდი; 480200000.03.030.000621 (Վրաստանի օրենսդրական տեղեկագիր, համաձայնագիր՝ Վրաստանի և ՌԴ-ի միջև Վրաստանի տարածքներով ռազմական բեռների և անձնակազմի տարանցման կազմակերպման վերաբերյալ, գրանցման ծածկագիր՝ 480200000.03.030.000621):*

[5] *Տե՛ս საქართველოს პრეზიდენტი მიხეილ სააკაშვილი, გამოსვლები და განცხადებები, "საქართველოს პრეზიდენტის მიხეილ სააკაშვილის შეხვედრა მასობრივი ინფორმაციის საშუალებებთან", 12.07.2006 (Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլի, ելույթներ և հայտարարություններ, «Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի հանդիպումը լրատվամիջոցների հետ»), հասանելի է՝ http://www.saakashviliarchive.info/ge/PressOffice/News/SpeechesAndStatements?p=2423&i=1, 23.06.2020:*

ու վարժեցման, զենքի ու ռազմական տեխնիկայի մատակարարման, Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հիմնախնդիրները, որոնց հիման վրա էլ Վրաստանում ռուսական զինված ուժերի բացը փոխլրացնելու նպատակով մշակել են հետագա գործողությունների մարտավարություն: Պետք է նաև արձանագրել, որ Սաակաշվիլիի այս այցը տեղի է ունեցել Սանկտ Պետերբուրգում G8-ի հանդիպման նախօրեին:

Երբ արդեն Վրաստանի ու ՌԴ-ի միջև վերջնականապես որոշվել էր ռուսական զորքերի դուրսբերման հարցը, 2007 թ. մարտի 1-ին ԱՄՆ-ի հակահրթիռային պաշտպանության գործակալության տնօրեն գեներալ Օբերինգը հայտարարեց Կովկասում ԱՄՆ-ի հակահրթիռային պաշտպանության ռադարի տեղադրման հնարավորության մասին[1]: Կարելի է եզրակացնել, որ գեներալը, Կովկաս ասելով, նկատի է ունեցել Վրաստանում նման կայանի տեղակայման անհրաժեշտության մասին, որը, անշուշտ, ավելի է սրել Վրաստան-ՌԴ հարաբերությունները, քանի որ ՌԴ-ը բազմիցս հայտնել է իր դժգոհությունները Ռուսաստանի հարևան երկրներում այդ կայանների կամ ռազմաբազաների տեղակայման ամերիկյան մտադրությունների վերաբերյալ: Չնայած դրան՝ Ռուսաստանը, Վրաստանի և ՌԴ-ի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Ախալքալաքի 62-րդ ռազմաբազան ամբողջությամբ դուրս բերեց Վրաստանից 2007 թ. հունիսի 27-ին, Բաթումի 12-րդ ռազմաբազան՝ նոյեմբերի 13-ին, իսկ Վազիանի և Գուդաութայի ռազմաբազաներն արդեն 2001 թ. դուրս էին բերված Վրաստանի տարածքներից, սակայն Գուդաութայի ռազմաբազայում մնում էին միայն ԱՊՀ խաղաղապահները, ինչից դժգոհ էր անձամբ Մ. Սաակաշվիլին[2]:

Պաշտոնական Թբիլիսին, շարունակելով հաճոյանալ ԱՄՆ-ին, նրա դաշնակիցներին և առաջնորդվելով անվտանգության ամրապնդման, ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան զենք ու զինամթերք ունենալու սկզբունքով, հրաժարվեց ռուսական կալաշնիկովից (AK-47), իսկ 2007 թ. վերջերին ԱՄՆ-ից ձեռք բերեց M4 (5.56 x 45 տրամաչափի) ինքնաձիգ հրացաններ[3]: Այսպես Սաակաշվիլին, հավատարիմ մնալով բանակի նորովի կառուցման մասին նախագահական երդմնակալության ժամանակ արած հայտարարությանը, 2008 թ. հունվարի 18-ին՝ ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան նոր ռազմական բազայի բացման արարողության ժամանակ, Գորիում զինվորականներին ներկայացրեց ամերիկյան M4 զինատեսակը՝ վստահեցնելով, որ ԱՄՆ-ի աջակցությամբ անցում են կատարել արևմտյան զենքի ու չափանիշների[4]: Նա նաև հաստատեց, որ արդեն ձեռք են բերել նոր տեսակի զրահատեխնիկա, հրետանի և պատրաստվում են թարմացնել ռազմական ավիացիան արևմտյան չափանիշներով: Թեպետ արդեն Վրաստանը ձեռք էր բերել ամերիկյան M4 ավտոմատ հրացաններ և այլ տեսակի զենքեր ու զինամթերքներ, սակայն վրաց-օսական օգոստոսյան պատերազմի ընթացքում կարողացել են օգտագործել հիմնականում ռուսական արտադրության զինամթերք[5]: Ըստ երևույթին՝ Սաակաշվիլիի կողմից ռուսական արտադրության ավտոմատներից հրաժարվելն ու ամերիկյան M4 ինքնաձիգներով համալրումը կարելի է համարել «քաղաքական որոշում» և ավելի շատ պայմանավորված էր ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ռազմաքաղաքական ուղղության զարգացման նպատակով:

---

[1] *Տե՛ս Алиев Е., указ. соч., էջ 14-15:*

[2] *Տե՛ս Корнелий Какачия, Конец Российских военных баз в Грузии: социальные, политические и стратегические последствия их вывода, Центральная Азия и Кавказ, № 2(56), 2008, էջ 63-66:*

[3] *Տե՛ս სამხედრო ჟურნალისტთა საერთაშორისო ასოციაცია, აშშ–ის ელჩობის კანდიდატი: „აშშ საქართველოს M4 ტიპის ავტომატურ შაშხანებს მიიღებს“, თბილისი, 22.03.2012 (Ռազմական լրագրողների միջազգային ասոցիացիա, ԱՄՆ դեսպանի թեկնածու. «ԱՄՆ-ն Վրաստանին կվաճառի M4 ավտոմատ հրացաններ», Թբիլիսի), հասանելի է՝ https://warreporter.wordpress.com/2012/03/22/, 18.05.2020:*

[4] *Տե՛ս "Saakashvili Opens New Base, Speaks of New Weapons in Army", Civil.ge, 18/01/2008, հասանելի է՝ https://civil.ge/archives/114116, 19.05.2020:*

[5] *Տե՛ս ირაკლი ალადაშვილი, "კალაშნიკოვი" ქართული არმიის ისტორიიდან..., კვირის პალიტრა, 30.12.2013 (Իրակլի Ալադաշվիլի, «Կալաշնիկով» վրացական բանակի պատմությունից ..., «Կվիրիս պալիտրա» ամսագիր), հասանելի է՝ https://www.kvirispalitra.ge/samkhedro-thema/20069-qkalashnikoviq-qarthuli-armiis-istoriidan.html, 18.05.2020:*

ԱՄՆ-ի կողմից Վրաստանին հատկացված ռազմական աջակցությունը տարբեր ձևաչափերով՝ զինվորականներին մարզելով, զենք ու զինամթերք վաճառելով, ֆինանսական աջակցությամբ, փորձի փոխանակմամբ, ռազմական օբյեկտների բարելավմամբ և աջակցության այլ ծրագրերով, էապես նպաստել է Վրաստանի պաշտպանության տարեկան ծախսերի ավելացմանը՝ ընդհանուր առմամբ 2003-2008 թթ. ընթացքում 30 մլն-ից հասցնելով մինչև 1 մլրդ դոլարի[1]: Ռազմական բյուջեի կտրուկ մեծացումից կարելի է ենթադրել, որ Վրաստանն ԱՄՆ-ի աջակցությամբ միտված է եղել նաև անհրաժեշտության դեպքում ռազմական ճանապարհով վերականգնելու Աբխազիայի և Հարավային Օսեթիայի տարածքների նկատմամբ վերահսկողությունը և դրանով իսկ վերջնականապես պատրաստվել ՆԱՏՕ-ին անդամությանը:

ՌԴ-ն էլ իր հերթին Վրաստանի հետ հարաբերությունների լարվածության համայնապատկերում հաշվի է առել Աբխազիայի անվտանգության պահպանման ռիսկերը. 2008 թ. ապրիլի 16-ին նախագահ Պուտինը հրամայել է կառավարությանը և շրջանային իշխանություններին ուղիղ կապ հաստատել Ցխինվալի և Սուխումի՝ միջազգայնորեն չճանաչված կառավարությունների հետ, իսկ արդեն ապրիլի 17-ին Աբխազիայում Օչամչիրի ռազմաբազան համալրվել է 300 ռուս զինծառայողներով և անհրաժեշտ ծանր զինտեխնիկայով[2]: Պուտինի այս հրամանը վրաց իշխանությունների կողմից հայտարարվել է որպես ակնհայտ անեքսիա Վրաստանի երկու շրջանների նկատմամբ[3]: Հատկանշական է, որ Պուտինի այս գործողություններն ազդել են կողմերի միջև հարաբերությունների վատթարացմանը:

Բոլոր դեպքերում վրաց-ռուսական հարաբերությունների լարվածության գագաթնակետը դարձավ վրաց-օսական օգոստոսյան պատերազմը: 2008 թ. օգոստոսի 7-ի ուշ գիշերը՝ ժամը 23:35-ից սկսած, Վրաստանի և Հարավային Օսեթիայի միջև տեղի ունեցավ ռազմական բախում, և ՌԴ ակտիվ միջամտությամբ «հնգօրյա պատերազմն» ավարտվեց Վրաստանի պարտությամբ[4]: Պատերազմի ակտիվ հատվածում Սև ծովով Վրաստանի արևմտյան ափերին էին մոտեցել ՆԱՏՕ-ի չորս, այդ թվում՝ ԱՄՆ-ի ռազմանավեր, որոնք 34 տոննա մարդասիրական օգնություն էին բերել Վրաստանին, սակայն ռուսական հետախուզությունը հավաստի տեղեկություն ուներ, որ այդ նավերում մարտական հրթիռներ էին թաքցված, որոնք բերվել էին Իրաքից՝ ՌԴ-ին հարվածելու համար[5]: ՆԱՏՕ-ի ղեկավարությունը հայտարարել է, որ այդ ռազմանավերը նախապես ծրագրված հակածովահենային վարժություններ պետք է անեին, իսկ այդ ժամանակ մյուս երկրներից եկած նավերը դուրս են եղել ՆԱՏՕ-ի ղեկավարումից:

Օգոստոսի 13-ին Սաակաշվիլին դժգոհել է՝ ԱՄՆ-ից համարժեք օպերատիվ աջակցություն չստանալու համար: Նա խոստովանել է, որ ԱՄՆ-ը վրաց-օսական պատերազմի ժամանակ պարտավոր էր պաշտպանել Վրաստանի օդային տարածքներն ու նավահանգիստները, սակայն Ռուսաստանի զինված ուժերն ու ռազմական տեխնիկան կարողացան շատ արագ իրենց վերահսկողության տակ վերցնել մի շարք կարևոր օբյեկտներ ու ռազմավարական նշանակության տարածքներ, այդ թվում՝ Փոթիի նավահանգիստը[6]: Ջ. Բուշը, անշուշտ, անմիջապես Պեկինից քննադատել է ՌԴ-ին՝ կոչ անելով դադարեցնել ռազմական

---

[1] *Տե՛ս Lincoln Mitchell, Alexander Cooley, After the August War: A New Strategy for U.S. Engagement with Georgia, The Harriman Review, Volume 17, Numbers 3-4, May 2010, էջ 45:*

[2] *Տե՛ս Svante E. Cornell, S. Frederick Starr, The Guns of August 2008: Russia's War in Georgia, Andrei Illarionov, "The Russian Leadership's Preparation for War, 1999-2008", Routledge, London and New York, January 15, 2015, էջ 68:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Տե՛ս Минасян С., "Пятидневная война" августа 2008 г.: военно-политический анализ, Кавказ-2008, Ежегодник Института Кавказа, Ереван, 2010, էջ 106:*

[5] *Տե՛ս Andrew E. Kramer, NATO Ships in Black Sea Raise Alarms in Russia, The New York Times, Aug. 27, 2008, հասանելի է՝ https://www.nytimes.com/2008/08/28/world/europe/28russia.html?_r=0, 23.06.2020:*

[6] *Տե՛ս David Stout, Chivers C. J., Bush Sending Aid to Georgia, The New York Times, Aug. 13, 2008, հասանելի է՝ https://www.nytimes.com/2008/08/13/world/europe/14prexy.html, 29.06.2020:*

գործողությունները, հարգել Վրաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը և չխոչընդոտել ԱՄՆ-ի կողմից ուղարկված հումանիտար ու բժշկական օգնության համար նախատեսված ամերիկյան ռազմական օդանավերի ու ռազմանավերի մուտքը Վրաստանի տարածքներ: Սաակաշվիլին այս հայտարարությունը որակել է շատ ուժեղ և տեղին, միևնույն ժամանակ կարևորել է Թբիլիսիի օդանավակայանի անվտանգության ապահովումը, ամերիկյան օգնությունը բնութագրել՝ որպես «միանշանակ ամերիկյան ռազմական ներկայություն»՝ անվանելով այն «շրջադարձային»:

Ընդհանուր առմամբ՝ Սաակաշվիլիի ակնկալիքները մեծ են եղել, և կարելի է եզրակացնել, որ ռուս հետախույզներն իրապես ամերիկյան ռազմանավերում նկատել էին մարտական կամ հակաօդային պաշտպանության հրթիռներ ու ռազմական այլ սարքավորումներ, այդ իսկ պատճառով էլ թույլ չեն տվել օգնությունը հասցնել համապատասխան վայր:

Ամերիկյան որոշ մասնագետների կարծիքով՝ ԱՄՆ-ի անմիջական միջամտությունը սխալ քայլ կլիներ, քանզի Ռուսաստանը միջուկային տերություն է և այդ տարածաշրջանի մասնակիցն ու հարևանը, իսկ ԱՄՆ-ը բավական մեծ հեռավորության վրա է գտնվում և չի կարող լուրջ աջակցություն ցուցաբերել Վրաստանին: Փոխարենը ԱՄՆ-ը հատուկ պատրաստված 2000 վրաց զինվորականների Իրաքից վերադարձրեց հայրենիք (Իրաքում կոալիցիոն ուժերի երրորդ ամենամեծ աջակցողն էր՝ ԱՄՆ-ից և Բրիտանիայից հետո), ինչն էլ, անշուշտ, քննադատվեց Պուտինի կողմից[1]: Իրատեսական է, որ Իրաքից վերադարձած զինվորականները, լավ պատրաստված լինելով, պետք է պատերազմեին Ռուսաստանի դեմ, և չէր բացառվում, որ նրանց շարքերում կարող էին լինել նաև ԱՄՆ-ի զինվորականներ:

Թեպետ վրացական զորքերը պատրաստվել էին ամերիկացի մասնագետների կողմից, սակայն ընդամենը հինգ օր տևած պատերազմում Վրաստանը պարտություն կրեց: Սա ապացույց էր, որ ամերիկյան մասնագետների գործադրած ջանքերը ապարդյուն էին:

Վրաստանի և Ռուսաստանի միջև ռազմական գործողությունները դադարեցին, և զինված ուժերը ելման դիրքեր վերադարձան Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի միջնորդությամբ և նրա կողմից առաջ քաշված 6 սկզբունքների համաձայնեցման շնորհիվ[2]: Նույնիսկ այս պարագայում երկրորդական պլան մղվեց ԱՄՆ-ի դերը Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձությունների զարգացման գործընթացներում:

Պատերազմի արդյունքում Վրաստանը կորցրեց տարածքային ամբողջականության վերականգման վերջին հույսերը, քանզի 2008 թ. օգոստոսի 26-ին Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունն ու լծվեց նրանց հետ երկկողմանի հարաբերությունների զարգացմանը, իսկ Վրաստանը դուրս եկավ 1994 թ. Մոսկվայի հրադադարի մասին պայմանագրից[3]:

---

[1] *Տե՛ս "Bush Condemns Russia's Attack on Georgia", CBS News, August 10, 2008 / 11:49 PM, հասանելի է՝ https://www.cbsnews.com/news/bush-condemns-russias-attack-on-georgia/, 30.06.2020:*

[2] *Տե՛ս "Background: Six-point peace plan for the Georgia-Russia conflict", Reliefweb, Deutsche Presse Agentur, Published on 15 Aug., 2008, հասանելի է՝ https://reliefweb.int/report/georgia/background-six-point-peace-plan-georgia-russia-conflict, 15.08.2020: Ն. Սարկոզիի կողմից ներկայացված հրադադարի 6 սկզբունքներն են.*

1. Կողմերից ոչ ոք չպետք է գործադրի բռնություն (սա վերաբերում է բոլորին՝ օսերին, աբխազներին, ամբողջությամբ Վրաստանին և Ռուսաստանին):

2. Ռազմական գործողությունների դադարեցում:

3. Մարդասիրական օգնության մատչելիության ապահովում:

4. Վրաստանի զինված ուժերի վերադարձը սովորական բնակավայրեր:

5. Ռուսաստանի զինված ուժերը Հարավային Օսեթիայում կվերադառնան ռազմական գործողությունների ելման դիրքեր: Ռուս խաղաղապահները լրացուցիչ անվտանգության միջոցներ կիրականացնեն մինչև միջազգային մշտադիտարկման մեխանիզմների կիրառումը: Այս միջոցառումները գործում են միայն Հարավային Օսեթիայի տարածքում և ոչ մի դեպքում՝ ամբողջ Վրաստանի տարածքում:

6. Հարավային Օսեթիայում և Աբխազիայում անվտանգությունն ու կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է բացել միջազգային քննարկումների եզրեր:

[3] *Տե՛ս Маркедонов С., Турбулентная Евразия, "Межэтнические, гражданские конфликты, ксенофобия в новых независимых государствах постсоветского пространства", Academia, Москва, 2010, էջ 53 և 61:*

ԱՄՆ-ը Վրաստանի տարածքային կորուստների ու ծանր պարտության դիմաց փորձեց փոխհատուցել Վրաստանին (2008 թ.)՝ 144 մլն դոլար ռազմական օգնություն ցուցաբերելով, իսկ 2010-2017 թթ. տարեկան միջին հաշվարկով՝ 76 մլն դոլար՝ հետպատերազմյան Վրաստանի անվտանգության ու կայունության վերականգման համար[1]:

Թեև ԱՄՆ-ը Վրաստանին ցուցաբերել է հումանիտար և ֆինանսական աջակցություն, այնուամենայնիվ Սաակաշվիլին իր հուշերում փաստում է, որ ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո՝ 2008-2009 թթ., բոլոր զենք մատակարարող երկրները, այդ թվում՝ Ուկրաինան ու ԱՄՆ-ը, հրաժարվել են Վրաստանին զենք ու զինամթերք վաճառելուց: Այս ոչ պաշտոնական էմբարգոյի մասին Սաակաշվիլիին զգուշացրել էր Կոնդոլիզա Ռայսը, որի արդյունքում ստեղծել են սեփական ռազմական արդյունաբերության արտադրման գործարան և նույնիսկ պայմանավորվել են արտադրանքը վաճառել 600 մլն դոլարի դիմաց Արաբական Միացյալ Էմիրություններին, Սաուդյան Արաբիային ու Ադրբեջանին[2]:

Վրաստանի հատկապես իշխող վերնախավն իրենց ռազմավարության մեջ անկյունաքարային նշանակություն են տալիս ՆԱՏՕ-ին անդամագրվելու գաղափարին նույնիսկ պատերազմում պարտվելուց հետո, հետևաբար տպավորություն է ստեղծվում, որ վրացական քաղաքական վերնախավի ճնշող մեծամասնությունն իրապես հավատում էր նրան, որ ՆԱՏՕ-ի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի օգնությամբ Վրաստանին կհաջողվի լուծել իր տարածքային խնդիրները: Ըստ էության, երկկողմանի հարաբերությունների բոլոր նշանակալի փաստաթղթերը դիտարկվում են ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին ինտեգրվելու ռազմավարության համապատասխանության տեսանկյունից: Վերոնշյալի ցայտուն օրինակ է Ռազմավարական համագործակցության մասին խարտիան, որը երկու պետությունների արտաքին գերատեսչությունների ղեկավարները՝ Կ. Ռայսը և Գ. Վաշաձեն, ստորագրեցին Վաշինգտոնում 2009 թ. հունվարի 9-ին՝ դեռևս Ջ. Բուշի վարչակազմի օրոք: Խարտիայի դրույթների համաձայն՝ կողմերը կհիմնվեն պաշտպանության ու զինված ուժերի համապատասխան գերատեսչությունների միջև համագործակցության վրա, և ԱՄՆ-ը կաջակցի Վրաստանի անվտանգության ու պաշտպանության օրինական պահանջների բավարարմանն ուղղված ջանքերին, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի հետ զինված ուժերի զարգացման ճանապարհով[3]:

Խարտիայի երկրորդ բաժինն ամբողջությամբ նվիրված է կողմերի միջև պաշտպանության և անվտանգության համագործակցությանը, որի հիման վրա էլ ԱՄՆ-ը պետք է անի հնարավոր ամեն ինչ Վրաստանին ՆԱՏՕ-ի անդամ դարձնելու գործընթացում: Սակայն միևնույն ժամանակ փաստաթղթի ստորագրման պահին ԱՄՆ պետքարտուղար Կ. Ռայսը նշել է, որ Վրաստանի ինտեգրումը ՆԱՏՕ-ին պետք է բխի հենց վրացիների կամքից և ՆԱՏՕ-ի չափանիշներին բավարարելու՝ Վրաստանի հնարավորությունից[4]: Իսկ նրա օգնական Մ. Բրայզան էլ իր հերթին պարզաբանել է լրագրողներին, որ ստորագրված փաստաթղթում նշված չէ ԱՄՆ-ի կողմից Վրաստանի անվտանգության երաշխավորությունը, քանի որ այն կարող է տեղի ունենալ միայն Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո[5]: Ավելի

---

[1] *Տե՛ս Cory Welt, Georgia: Background and U.S. Policy, Congressional Research Service, R45307, Updated October 17, 2019, էջ 18:*

[2] *Տե՛ս Саакашвили М., Пробуждение силы: Уроки Грузии – для будущего Украины, "Война", Фолио, 2016, հասանելի է՝ https://e-libra.su/read/493883-probuzhdenie-sily-uroki-gruzii-dlya-buduschego-ukrainy.html, 16.08.2020:*

[3] *Տե՛ս US Departament of State, "United States-Georgia Charter on Strategic Partnership", Bureau of European and Eurasian Affairs, January 9, 2009, հասանելի է՝ https://www.state.gov/united-states-georgia-charter-on-strategic-partnership/, 01.08.2020:*

[4] *Տե՛ս "U.S. signs strategic partnership pact with Georgia", Reuters.com, Washington, January 10, 2009, 12 Years ago, հասանելի է՝ https://www.reuters.com/article/us-georgia-usa-pact/u-s-signs-strategic-partnership-pact-with-georgia-idUKTRE5086UQ20090109, 30.07.2020:*

[5] *Տե՛ս "Georgia, U.S. Sign Strategic Partnership Charter", Civil.ge, 09/01/2009 - 21:05, հասանելի է՝ https://civil.ge/archives/118191, 31.07.2020:*

վաղ՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեն ասել է, որ ԱՄՆ-ի և Վրաստանի միջև համագործակցության խարտիան չի պարունակում դրույթներ վրացական տարածքում ամերիկյան ռազմակայաններ տեղակայելու վերաբերյալ[1]:

Մինչ Վրաստանը զբաղված էր ԱՄՆ-ի հետ համագործակցության խորացմամբ, ՌԴ-ն ամրապնդում էր իր դիրքերը «Աբխազիայի և Հարավային Օսեթիայի նորանկախ հանրապետություններում»: 2010 թ. փետրվարի 17-ին Ռուսաստանի և Աբխազիայի նախագահների ներկայությամբ «Աբխազիայի Հանրապետության տարածքում ռուսական համատեղ ռազմաբազայի մասին» համաձայնագիրը ստորագրեցին երկու երկրների պաշտպանության նախարարներ Անատոլի Սերդյուկովը և Միրաբ Քիշմարիան՝ 49 տարի ժամկետով՝ հաջորդ հինգ տարվա ընթացքում ավտոմատ երկարաձգվելու հնարավորությամբ[2]: Ըստ համաձայնագրի՝ Գուդաութա ռազմաբազայի ռուս 1.7 հազար զինծառայողների թիվը կարող էր կրկնապատկվել Աբխազիայում իրավիճակի սրման դեպքում: Փաստաթուղթը նախատեսում էր նաև փոխգործակցություն՝ ծովային հաղորդակցությունն ու ծովում անվտանգությունն ապահովելու համար:

2010 թ. ապրիլի 7-ին Ռուսաստանի պաշտպանության նախարար Ա. Սերդյուկովի և Հարավային Օսեթիայի պաշտպանության նախարար Յուրի Տանաևի կողմից ստորագրվել է համաձայնագիր, համաձայն որի՝ Ռուսաստանի ռազմաբազաները 49 տարի գործելու են Հարավային Օսեթիայի տարածքներում՝ պաշտպանելու «Հարավային Օսեթիայի ինքնիշխանությունն ու անվտանգությունը» և հակահարված տալու միջազգային ահաբեկչական կազմավորումների զինված հարձակումներին[3]:

Հատկանշական է, որ այս իրողությունն անընդունելի էր վրաց հասարակության ու իշխանությունների համար, և ՌԴ-ը նրանց կողմից ընկալվում է որպես բռնակալ, օկուպանտ և թշնամի երկիր:

Աբխազիայում և Հարավային Օսեթիայում ՌԴ-ի ակտիվության պատճառով ԱՄՆ-ը վերսկսեց ռազմական աջակցություն ցուցաբերել Վրաստանին: 2011 թ. հունիսի 7-ին ԱՄՆ պաշտպանության նախարարությունը Վրաստանին նվիրեց ռազմական «Համմեր» (Humvee) տեսակի 40 մեքենա, որոնք օգտագործվելու էին Աֆղանստանում խաղաղապահ առաքելություն իրականացնելու և ուսումնական վարժանքներում ռազմատեխնիկայի հնարավորություններին տիրապետելու համար[4]:

Վրաստանի արտաքին ռազմաքաղաքական արևմտյան գործակցության ուղղու ամրապնդումը բացասաբար անդրադարձավ նաև ՀՀ ռազմական անվտանգության վրա: 2011 թ. վրացական պառլամենտը Վրաստանի տարածքով ռազմական բեռների և անձնակազմի տարանցիկ փոխադրման վերաբերյալ Ռուսաստանի հետ համաձայնագիրը չեղյալ հայտարարելու մասին որոշում ընդունեց, որի ժամկետը լրանում էր նույն թվականի նոյեմբերին, թեպետ բարեկամ Հայաստանի համար կարող էին բացառություն անել[5]:

---

[1] *Տե՛ս "В Грузии американских баз не будет - спикер парламента", Интерфакс, Тбилиси, 8 января, 2009, հասանելի է՝ https://www.interfax.ru/russia/55775, 31.07.2020:*

[2] *Աբխազիայում ռուսական 7-րդ ռազմաբազան տեղակայված է Ռուսաստանի և Աբխազիայի միջև ռազմական համագործակցության մասին համաձայնագրով, որ ստորագրվել է 2009 թ. սեպտեմբերին: ՌԴ այս ռազմաբազան համալրված է հետևակի մարտական մեքենաներով ու կրահամեքենաներով, ծանր կրահամեքենաներից՝ փոքր քանակով T-62 տանկերով: Գուդաութայում ռուսական ռազմաբազայի շտաբը և օդանավակայանը պաշտպանելու համար նախատեսվում էր տեղակայել C-300 կենիթահրթիռային համակարգեր և «Տունգուսկա» կենիթահրթիռային և հրթիռային համակարգերի ստորաբաժանում: Տե՛ս "Военная база как основа независимости", Интерфакс, 17 февраля 2010, հասանելի է՝ https://www.interfax.ru/russia/124149, 15.08.2020:*

[3] *Տե՛ս Moscow, Tskhinvali Sign Military Base Treaty, Civil.ge, 08/04/2010 - 13:29, հասանելի է՝ https://civil.ge/archives/120049 , 16.08.2020:*

[4] *Տե՛ս აშშ–მ ქართულ ჯარს ორმოცი "ჰამერი" გადასცა,Civil.ge, 07/06/2011 - 18:23, (ԱՄՆ-ը վրացական բանակին հանձնեց քառասուն «Համմեր»:), հասանելի է՝ https://civil.ge/ka/archives/149171, 18.08.2020:*

[5] *Վերջին անգամ, Կալանդաձեի խոսքով, Վրաստանը տարանցման թույլտվություն է տվել 2008 թ. հուլիսին: Ավելի ուշ Ռուսաստանը նման խնդրանքով դիմել է Վրաստանին, բայց մերժվել է: Տե՛ս Цыганок А., Грузия опускает шлагбаум, Независимая газета, Интернет-версия, 29.04.2011, հասանելի է՝*

Սաակաշվիլիի վարչակազմի կողմից արված այս քայլը մեծ մասամբ ուղղված էր ՌԴ-ի դեմ, սակայն ուղիղ հարված էր Հայաստանին, քանի որ արգելվում էր ՌԴ-ից Վրաստանի տարածքով ՀՀ բանակի համար գնված զինտեխնիկայի և զինամթերքի տեղափոխումը ՀՀ:

2011 թ. դեկտեմբերի 23-ին Վրաստանի խորհրդարանը №1895–RS որոշումն անվավեր ճանաչեց և ընդունեց «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգը» հաստատելու մասին նոր որոշում, որում Վրաստանի առջև ծառացած սպառնալիքները, ռիսկերը և մարտահրավերները բաժնի առաջին և երկրորդ կետերում ՌԴ-ը ներկայացվում էր Վրաստանի անվտանգությանը սպառնացող թշնամի երկիր, իսկ Վրաստանի անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները բաժնի հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ կետերում և ենթակետերում ԱՄՆ-ը, Թուրքիան, Ուկրաինան և Ադրբեջանը ներկայացված էին որպես ռազմավարական դաշնակիցներ, դեռ ավելին՝ մեծացվել էր ԱՄՆ-ի դերը՝ նրան վերագրելով փրկչի գործառույթ[1]: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա վերջինս կրկին մնում է սերտ գործընկեր: Վրաստանը հավատարիմ է մնում նաև ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամության առաջնահերթության սկզբունքներին:

2012 թ. հունվարի 30-ին Սպիտակ տանը վերջապես տեղի ունեցավ Բ. Օբամայի և Սաակաշվիլիի առաջին պաշտոնական հանդիպումը, քանի որ երկու տարի առաջ նախագահներն արդեն հնարավորություն էին ունեցել հանդիպելու այլ ձևաչափերով Վաշինգտոնում՝ միջուկային անվտանգության գագաթնաժողովում, 2010 թ. Լիսաբոնում՝ ՆԱՏՕ գագաթաժողովի ընթացքում, և այլուր[2]: Կողմերը հանդիպման ընթացքում պայմանավորվել են շարունակել զարգացնել պաշտպանական համագործակցությունը, որը նպաստելու էր վրացի զինվորականներին՝ հետամուտ լինելու բարեփոխումներին, պահպանելու առաքելությունն Աֆղանստանում (International Security Assistance Force) ISAF-ի հետ և ավելի արդյունավետ գործելու ՆԱՏՕ-ի շրջանակներում: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ը շարունակելու էր աշխատել եվրոպացի դաշնակիցների հետ՝ աջակցելու Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամության հարցում: Պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հունիսի 5-ին՝ Վրաստանի Բաթումի քաղաքում երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակի կապակցությամբ ելույթի ընթացքում, վերահաստատեց երկու երկրների նախագահների՝ հունվարին ձեռք բերած պաշտպանական ու անվտանգության ամրապնդմանն ուղղված պայմանավորվածությունը՝ անուղղակիորեն խոստանալով աջակցել Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգման հարցում[3]:

2012 թ. հետո «Վրացական երազանք» կոալիցիան, որը շատերը համարում են ավելի ռուսամետ, գալով իշխանության, ավելի քիչ հետաքրքրություն է ցուցաբերել Վրաստանում ամերիկյան ռազմաբազայի տեղակայման հարցում[4]: Սակայն Հնգօրյա պատերազմից հետո անցած 10 տարիների ընթացքում առնվազն 45 տարբեր զորավարժություններ են անց-

---

https://nvo.ng.ru/armament/2011-04-29/9_gruzia.html, 03.06.2020:

[1] Տե՛ս Սաքարթվելոսի Սայանոնմդեբլո մացնե, Սաքարթվելոսի Պարլամենտի դադգենիլեբա №5589–րս, "Սաքարթվելոսի Երովնպլո Պասֆրտխոյբիսի Կոնցեպցիոն" դամտկիցեբների մեսախեբ, դոկումենտի նոմերի; 5589–րս, թբիլիսի, 2011 ճլիսի 23 դեկեմբերի, սարեգիստրացիո կոդի; 120000000.09.001.016087 (Վրաստանի օրենսդրական տեղեկագիր, Վրաստանի խորհրդարանի որոշում №5589-RS, «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգը» հաստատելու մասին, փաստաթղթի համարը՝ 5589-RS, Թբիլիսի, 23-ը դեկտեմբերի, 2011 թ., գրանցման ծածկագիր՝ 120000000.09.001.016087):

[2] Տե՛ս The White House, President Barack Obama, "President Obama Meets with Georgian President Mikheil Saakashvili", February 3, 2012, հասանելի է՝ https://obamawhitehouse.archives.gov/blog/2012/02/03/president-obama-meets-georgian-president-mikheil-saakashvili, 24.08.2020:

[3] Տե՛ս U.S Department of State, Remarks at Omnibus Session of the Strategic Partnership Commission, Hillary Rodham Clinton, Secretary of State, Radisson Blu Hotel, Batumi, Georgia, June 5, 2012, հասանելի է՝ https://2009-2017.state.gov/secretary/20092013clinton/rm/2012/06/191784.htm, 25.08.2020:

[4] Տե՛ս Чхеидзе И., Военные базы США в Грузии: когда друг опаснее врага, EurAsia Daily, 21 августа 2019, հասանելի է՝ https://eadaily.com/ru/news/2019/08/21/voennye-bazy-ssha-v-gruzii-kogda-drug-opasnee-vraga, 02.09.2020:

կացվել Վրաստանում, որի գերակշիռ մասը՝ ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի զինված ուժերի ու զինտեխնիկայի մասնակցությամբ, իսկ մնացած մի քանիսը՝ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ միասին[1]: «Հնգօրյա» պատերազմից հետո Վրաստանի իշխանությունները նույնիսկ ավելի մեծ ուշադրություն են դարձրել զինված ուժերը ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան ամրապնդելուն և կազմակերպությանը միանալուն, քան պատերազմից առաջ:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուն 2015 թ. փետրվարի 29-ին՝ Վրաստան կատարած երկօրյա այցի ընթացքում, հանդիպել է վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի հետ, քննարկել ՆԱՏՕ-Վրաստան հիմնական փաթեթի իրականացման շուրջ հարցեր և այցելել Վազիանի ռազմաբազա, որտեղ հույս է հայտնել, որ կենտրոնը կսկսի գործել հենց 2015 թ.[2]: Այս կենտրոնը Վրաստանին աջակցելու էր բարեփոխել, արդիականացնել և ամրապնդել անվտանգության և պաշտպանության ոլորտը:

Վրաստանի և ՆԱՏՕ-ի միջև համագործակցության նոր «փաթեթը» աներկբա նպատակ ունի երկիրը պաշտպանելու ՌԴ-ից ակնկալվող սպառնալիքներից, սակայն «փաթեթի» բովանդակությամբ ենթադրում էր նաև Վրաստանում զորավարժությունների և գնահատման համատեղ կենտրոնի ստեղծում, որտեղ կվերապատրաստվեն ոչ միայն Վրաստանի զինված ուժերի զինծառայողները, այլև դաշինքի անդամ երկրները, գործընկերները և սիրիական հակակառավարական ուժերը[3], չնայած ավելի ուշ պաշտոնական Թբիլիսին հերքեց սիրիական հակակառավարական ուժերին մարզելու տեղեկատվությունը:

2015 թ. մարտի 13-ին Ա. Վերշբոուին հայտարարել է, որ Վազիանիի ռազմաբազան իրական թեկնածու է Գնահատման և վերապատրաստման կենտրոնի տեղակայման համար[4]: Կենտրոնի բացումը կարելի է դիտել ԱՄՆ-ի կողմից ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցում Վրաստանին օժանդակելու քայլ: Այնուհետև՝ 2016 թ. հուլիսի 6-ին, Վաշինգտոնում Վրաստանի անկախության 25-ամյակի առթիվ ԱՄՆ-ի և Վրաստանի միջև ստորագրվել է պաշտպանական և անվտանգության գործընկերության խորացման վերաբերյալ հուշագիր, որով կողմերը վերահաստատել են ԱՄՆ-ի և Վրաստանի միջև 2009 թ. կնքված ռազմավարական գործընկերությունը և պարտավորվել են խորացնել պաշտպանական և անվտանգության շուրջ համագործակցությունը, մեծացնել համատեղ վճռականությունը՝ հետագայում Վրաստանի՝ եվրատլանտյան հաստատություններում ինտեգրելու համար և ամրապնդելու Վրաստանի ինքնապաշտպանական կարողություններն ու ճկունությունը[5]:

Պետք է փաստենք, որ Վարդերի հեղափոխությունից հետո Վրաստանն ավանդաբար դարձել է ԱՄՆ-ի կողմից հատկացվող զարգացման և ռազմական աջակցության խոշոր շահառու: 2017 թ., Թրամփի վարչակազմի որոշմամբ, Վրաստանն ստացավ ԱՄՆ-ի կողմից պատրաստված մահացու զենքեր, այդ թվում՝ FGM-148 Javelin հակատանկային հրթիռային համակարգեր, իսկ 2019 ֆինանսական տարում ԱՄՆ Կոնգրեսը հատկացրել է 125 մլն դոլար ռազմական աջակցություն, ինչը Օբամայի նախագահության օրոք այդպես չէր[6]: Պաշտոնական Թբիլիսիի վարքագիծը կարելի է բացատրել ինչպես երկրում, այնպես էլ ամբողջ

---

[1] *Տե՛ս "Грузия: 45 военных учений за десять послевоенных лет", Кавказский Узел, 07 августа 2018, հասանելի է՝ https://www.kavkaz-uzel.eu/articles/323934/, 08.08.2020:*

[2] *Տե՛ս North Atlantic Treaty Organization, "Deputy Secretary General Vershbow in Tbilisi: implementation of the Wales Summit decisions on Georgia is on track", 02 Feb. 2015, հասանելի է՝ https://www.nato.int/cps/en/natohq/news_116968.htm, 28.06.2020:*

[3] *Տե՛ս НАТО "пакетирует" Грузию, РИА Новости, 04.02.2015, հասանելի է՝ https://ria.ru/20150204/1045916736.html, 28.06.2020:*

[4] *Տե՛ս Кикалейшвили М., Замгенсека НАТО: база "Вазиани" - подходящее место для учебного центра 13.03.2015, РИА Новости, Тбилиси, հասանելի է՝ https://ria.ru/20150313/1052386980.html, 28.06.2020:*

[5] *Տե՛ս U.S. Department of State, Memorandum on Deepening the Defense and Security Partnership Between the United States of America and Georgia, Washington, DC, July 6, 2016, հասանելի է՝ https://2009-2017.state.gov/r/pa/prs/ps/2016/07/259364.htm, 19.08.2020:*

[6] *Տե՛ս Kubiak M., Does Georgia Seek U.S. Military Presence?, Warsaw Institute, 13 May 2019, հասանելի է՝ https://warsawinstitute.org/georgia-seek-u-s-military-presence/, 01.07.2020:*

տարածաշրջանում կայունություն ապահովելու նրա ցանկությամբ: Այնուամենայնիվ, ամերիկյան ռազմական բազաների տեղակայման հարցը գնալով ավելի ինտենսիվ է դառնում:

2019 թ. հոկտեմբերին «Ժառանգություն» հիմնադրամի վերլուծաբան Լյուկ Քոֆֆիի (Luke Coffey) անձնական կարծիքը բուռն քննարկման առիթ է դարձել վրացական հասարակական և քաղաքական էլիտայի համար: Նա առաջարկել է Սիրիայից հեռացող ամերիկյան ռազմական զորախումբը տեղակայել Ախալքալաքում, իսկ Իսլամական պետության կողմից վտանգի դեպքում՝ այդ ռազմաբազայի ներուժն օգտագործել ահաբեկիչներին ոչնչացնելու համար[1]:

Չենք կարող չարձանագրել այն իրողությունը, որ վրացիների շրջանում ևս կան Վրաստանում ամերիկյան զորքերի տեղակայման գաղափարի աջակիցներ: Նրանք կարծում են, որ ՆԱՏՕ-ին անդամակցելու իրական հեռանկարի բացակայության պայմաններում ԱՄՆ-ը միակ դաշնակիցն է, որը կարող է պաշտպանել Ռուսաստանից: Որոշ մասնագետներ էլ ենթադրում են, որ Վրաստանը կարող է որպես պահեստ ծառայել թուրքական ռազմաբազաների համար, ինչն անընդունելի է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ՌԴ-ի համար[2]:

Հետխորհրդային ժամանակահատվածում ակնհայտ էր ԱՄՆ-ի հետաքրքրվածությունը հարավկովկասյան պետությունների նկատմամբ, որոնցից յուրաքանչյուրում ԱՄՆ-ն ուներ իր յուրահատուկ ռազմաքաղաքական հավակնություններն ու շահերը: Հարավային Կովկասում ԱՄՆ-ի շահերը, որպես կանոն, կապակցվում էին բնական հարուստ ռեսուրսների ու համաշխարհային շուկա դրանց տեղափոխումն ապահովող երթուղիների հետ, սակայն վերջին տարիներին տեղի ունեցած տարածաշրջանային զարգացումները ցույց տվեցին, որ ԱՄՆ-ի շահերի շրջանակն ավելի լայն է:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրությունը ամփոփելով՝ գալիս ենք այն եզրահանգումներին, որ ԽՍՀՄ փլուզումից ի վեր Հարավային Կովկասում զինված ուժերի վերադասավորումները և ռազմական տեխնիկայի վերաբաշխումներն անընդհատ լարված վիճակում են պահել տարածաշրջանի անվտանգության պահպանումն ու կայուն զարգացումը: Այս գործում մեծ է ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականության դերը Հարավային Կովկասում, հատկապես՝ Վրաստանում, քանզի նրա ֆինանսական, ռազմական և անմիջական աջակցությամբ տեղի ունեցավ Վրաստանից ռուսական ռազմաբազաների ամբողջական դուրսբերումը, հետագայում՝ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների զինված ուժերի ու զինտեխնիկայի քանակի աճը: Միևնույն ժամանակ նկատվում են ԱՄՆ-ի կողմից տարածաշրջանի ռազմականացման փորձեր՝ Վրաստանում հաճախակի կազմակերպվող զորավարժությունների միջոցով և ամերիկյան ռազմաբազաների տեղակայման ձգտումներով, որոնք երբեմն հանգեցնում են ինչպես քաղաքացիական, այնպես էլ միջպետական ռազմական բախումների: Սրա վառ օրինակն են 2008 թ. օգոստոսյան ռազմական լայնածավալ գործողությունները, որոնք ցավալի ավարտ ունեցան Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման տեսանկյունից, սակայն ապացուցվեց այն տեսլականը, որ 21-րդ դարում ազգերի ինքնորոշման իրավունքը վեր է մյուս բոլոր սկզբունքներից:

Կարող ենք եզրակացնել նաև, որ պաշտոնական Թբիլիսիի ու Վաշինգտոնի միջև ռազմական համագործակցությունը սկսվել է դեռևս Էդուարդ Շևարդնաձեի նախագահության օրոք: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ը Վրաստանի հետ ռազմական համագործակցության լայնածավալ ծրագրեր է սկզբնավորվել՝ ՆԱՏՕ-ի անդամ դարձնելու խոստումներով: Այս համագործակցությունը խորացել է նախագահ Մ. Սաակաշվիլիի վարչակազմի ղեկավարման օրոք, երբ Վրաստանի ռազմական բյուջեն ԱՄՆ գործուն աջակցությամբ սկսեց արագորեն աճել և մինչև 2008 թ. կազմեց ՀՆԱ 8.8 %-ը (սա

---

[1] *Տե՛ս Chedia B., US base in Georgia – A scarecrow in Russia's backyard?, New Eastern Europe, November 4, 2019, հասանելի է՝ https://neweasterneurope.eu/2019/11/04/us-base-in-georgia-a-scarecrow-in-russias-backyard/, 04.07.2020:*

[2] *Տե՛ս Cornell S., US engagement in the Caucasus: Changing gears, "September 11 and the Primacy of Security", Helsinki Monitor 2005, no. 2, էջ 113:*

ամենաբարձր ցուցանիշն էր հետխորհրդային Վրաստանի պատմության մեջ)[1], նույնիսկ այն մակարդակի, որ սկսվեց ինտենսիվորեն շրջանառվել Վրաստանում ամերիկյան ռազմաբազաներ տեղակայելու գաղափարը, և Սաակաշվիլիի համակիրները մեծ ոգևորությամբ ընդառաջեցին այս գաղափարին: Սակայն ռազմաբազաների տեղակայման հարցը մնաց վերլուծական քննարկման մակարդակում: Բիձինա Իվանիշվիլիի ղեկավարած «Վրացական երազանքի» վարչակազմի կողմից փորձեր էին արվում հավասարակշիռ քաղաքականություն վարելու և՛ ԱՄՆ-ի, և՛ ՌԴ-ի հետ, սակայն անկախ նրանց քաղաքական կամքից՝ վերջիններս գիտակցում էին, որ կար հասարակության որոշ հատվածի պահանջ, ըստ որի՝ ՌԴ-ն դիտարկվում էր որպես միակ թշնամի ու ագրեսոր երկիր, և հնարավորություն չէր տրվում գնալու ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորման ճանապարհով: Այդ իսկ պատճառով վրաց հասարակության հույզերն ավելորդ չբորբոքելու նկատառումով նրանք նույնպես ակտիվացրին ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների հետ հարաբերությունները և ավելի ինտենսիվ դարձրին եվրատլանտյան կառույցներին Վրաստանի անդամության հարցը:

Այսպիսով՝ Վրաստանի ու ԱՄՆ-ի միջև ռազմաքաղաքական հարաբերությունների հիմնական կորիզը ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության կառուցակարգերի նախանշումն էր: Այս գործընթացը, սակայն, բավականին թույլ տեմպերով էր զարգանում, քանի որ աշխարհաքաղաքական իրավիճակը կայուն չէր: Բացի դրանից՝ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությունը հղի էր նախ հենց ՆԱՏՕ-ի ղեկավարության համար լուրջ խնդիրներով: Խոսքն առաջին հերթին Ռուսաստանի հետ հարաբերությունների անխուսափելի սրացման մասին էր, այդ իսկ պատճառով չափազանց կասկածելի էր, որ մեծ տերությունների ղեկավարները, սրելով արդի քաղաքականության հրամայականները, հանուն Վրաստանի տարածաշրջանային հավակնությունների կզոհաբերեին Ռուսաստանի հետ իրենց հարաբերությունները:

Թեև դեռևս պաշտոնական հայտարարություններ չեն հնչել Վրաստանում ամերիկյան ռազմաբազաների տեղակայման շուրջ, այդուհանդերձ ԱՄՆ-ը կարող է շահագրգռված լինել դրանով մի շարք պատճառներով, որոնց թվում են սևծովյան տարածաշրջանում Ռուսաստանի կողմից շարունակվող ռազմականացումը, ինչպես նաև Արևմուտքի և Թուրքիայի միջև դժվարին համագործակցությունն Իրանի շուրջ: Հաշվի առնելով ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը՝ ԱՄՆ-ի ռազմաբազա ստեղծելու համար Վրաստանը, բնականաբար, դարձել է Կովկասի բոլոր երկրներից առավել տրամաբանականը: Ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս երկրներին, ապա Հայաստանը դեռևս շատ հարթություններում ապավինում է Ռուսաստանին, իսկ հարևան Ադրբեջանը պետք է հաշվի առնի պաշտոնական Անկարայի քաղաքականությունը:

Եվ այսպես, այսօր Վրաստանն անվտանգության ոլորտում ԱՄՆ-ի հետ երկկողմ համագործակցությունը և Վրաստանում ամերիկյան զինված ուժերի հնարավոր տեղակայումը համարում է անվտանգության ապահովման ամենացանկալի սցենարը, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այդ գաղափարի ու գործողությունների (տարածաշրջանում զինված ուժերի վերադասավորման և ռազմական տեխնիկայի վերաբաշխման) արդյունքում տեղի ունեցան և՛ վրաց-օսական օգոստոսյան, և՛ ադրբեջանա-արցախյան ապրիլյան պատերազմները, ինչպես նաև 2020 թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության վրա հարձակումը: Կարծում ենք, որ Հարավային Կովկասի երկրները պետք է համատեղ ջանքերով զերծ մնան տարածաշրջանի հետագա ռազմականացումից և գերտերությունների ու տարածաշրջանային տերությունների աշխարհաքաղաքական խաղերի մասը լինելուց՝ նոր պատերազմներից ու ռազմական բախումներից խուսափելու համար:

[1] *Տե՛ս Գծապատկեր № 1:*



Գծապատկեր № 1. Վրաստանի ռազմական ծախսերը 2004-2017 թթ.
Աղբյուրը՝ Վրաստանի պաշտպանության նախարարություն, Սպիտակ գիրք 2013, էջ 89 (www.mod.gov.ge):

Эдгар Чахоян, ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.). В статье подробно рассматриваются вопросы передислокации вооруженных сил на Южном Кавказе в контексте грузино-американских отношений, охватывающих период 1991-2019 гг. Подробно обсуждаются причины, ожидания и результаты углубления военного направления военно-политического сотрудничества Грузии, ее стратегического союза с США. Внимание уделяется шагам, предпринятым Соединенными Штатами для вывода российских военных баз из Грузии, политике дислоцирования вместо них американских военных баз, связанным с этим рискам региональной безопасности и стабильности, а также военным возможностям и модернизации военной техники в официальном Тбилиси.

Даны факты и события, доказывающие, что, при поддержке США, Саакашвили с 2004 года готовился к возвращению территорий, неподконтрольных официальному Тбилиси, даже в случае необходимости с применением силы, а также влияние изменений в Грузии на соседние страны, в частности, Армению. Статья посвящена изучению и анализу объема и влияния соглашений, заключенных между сторонами. Особо подчеркнуто начало, углубление и дальнейшее развитие военно-политических отношений между Грузией и США. Особое внимание было уделено изучению целей грузино-американских отношений в постсоветский период с точки зрения геополитических, энергетических, коммуникационных, концептуальных и стратегических вопросов в регионе, а также влиянию этих вопросов на отношения между двумя странами и региональная политика.

Ключевые слова: Южный Кавказ, перегруппировка вооруженных сил, военная база, НАТО, перераспределение военной техники, военно-политические отношения между Грузией и США, региональная безопасность, Министерство обороны Грузии, Абхазия, Южная Осетия.

Edgar Chakhoyan, ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019). The article presents in details the issues of redeployment of the armed forces in the South Caucasus in the context of Georgia-US relations, covering the period of 1991-2019. The reasons, expectations and results of the deepening of the military direction of Georgia's military-political cooperation, its strategic alliance with the United States, are discussed in details. Attention is paid to the steps taken by the United States to withdraw the Russian military bases in Georgia, the policy of deploying American military bases instead, the resulting regional security and stability risks, and the military capabilities and modernization of military equipment in official Tbilisi.

The facts and events prove that with the support of the United States, Saakashvili prepared since 2004 for the return of territories beyond the control of official Tbilisi, even if necessary, through the use of force. The impact of the military and geopolitical changes in Georgia on neighboring countries, particularly – Armenia, are presented as well. The article focuses on the study and analysis of the scope and impact of the agreements concluded between the parties. The beginning, deepening and further developments of the military-political relations between Georgia and the USA are fully emphasized. Special attention was paid to the study of the goals of Georgia-US relations in the post-Soviet period in terms of geopolitical, energy, communication, conceptual and strategic issues in the region, as well as the impact of these issues on the relations between the two countries and regional policy.

Keywords: South Caucasus, redeployment of the armed forces, military base, NATO, redistribution of military equipment, Georgia-US military-political relations, regional security, Georgian Ministry of Defense, Abkhazia, South Ossetia.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200